

ՇՈՐԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻՆ
ՅԵՎ ՆՐԱ
„ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ“

«Վագրենավոր» պոեմի 750-ամյակին
1187 — 1937

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

894.631.092 [Հայաստան]


Ռ-95

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1961 թ.

ՀՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻՆ
ՅԵՎ ՆՐԱ
“ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ”

“ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ” ՊՈԵՄԻ 750-ԱՄՅԱԿԻՆ

1187—1937



ՊԵՏՐՈՍ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՋԵՐԵՎԱՆ 1938

A 32/22

1364

ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԿԱԶՄՎԱԾ Ե ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ
ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏԻ ԿՈՂՄԻՑ



ՀԱՅԱ ՌՈՒՍՅԱՆԿԵԼԻ

ՌՈՒՄՅԱՆՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՐԱ «ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ»*)

«Ձե, չի լուել մեծ Շորայի
Յերգի ձեներ կաթողին,
Ու դարավոր ցալն աւանի
Ձի խոտակել են հոգին»:
ՀՈՎՀ. ՔՈՒՄԱՆՅԱՆ

1. Ավելի քան 200 տարի յե, ինչ ուսումնասիրության, ապա նաև դիտական հետազոտության առարկա յե դարձել վրաց գրականության արեգնաշող պսակը՝ «Վագրենավոր» պոեմը: Ավելի քան 30 հրատարակություն ե ունեցել այդ յերկը 1712 թվից մինչև այսօր: Խառնակ բանասերներ ու գրականագետներ են դրադիւ պոեմի ֆարուլայի, սյուսեյի, կառուցվածքի, ախարի, լեզվի, իդեաների և այլ պրոբլեմներով, ինչպես և պոեմի անմահ, համարյա լեզենդար դարձած հեղինակի անձնավորության պարզաբանման խնդիրներով, և չնայած դրան գիտական ուսթավելագիտությունը շատ և շատ հարցերի տակալին չի տվել վերջնական և անվերապահ լուծում:

Արձանագրելի յե անշուշտ, վոր առանձնապես խորհրդային ուսթավելագիտությունը, և այն ել վերջին տարիներում, խոշոր հաջողությունների չե հասել և ավելի շատ բան ե արել, քան արված եր անցյալ յերկու հարյուրամյակի ընթացքում՝ սկսած Վախտանգ Ե-րդ թագավորից, վորն առաջին անգամ բանասիրական վորոշ խմբագրումով հրատարակեց «Վագրենավորը» 1712 թվականին:

Իսկապես խոշոր դժվարությունների առաջ ե կանգնած ուսթավելագիտությունը՝ ինչ հարցի ել մոտենալու լինի: Այդ դժվարություններից առաջինն այն ե, վոր Ռուսթավելու և մեր միջև ընկած ժամանակի մոտացության ե հանձնել այդ հանձարեղ բանաստեղծի կյանքին ու դործունեյությանը վերաբերող համարյա բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, վորի հետևանքով այսօր Ռուսթավելու կենսագրությունը շարադրվում ե համարյա բացառապես ժողովրդական բանավոր ավանդությունների տվյալներ:

*) Ռուսթավելու պոեմը վրացերեն կոչվում ե «Վեփիխ տղառանի», վոր հայերեն թորգմանությամբ նշանակում ե «Վագրենավոր» այսինքն «Վագրի մորթի ունեցող»: Այդ անունը հաճախ թարգմանում են «Հնձենավոր», շփոթելով վագր և ինձ կենդանիների անունները:

րով, վորոնք վերին աստիճանի հակառակն են՝ անվերապահ վտանգու-
թյուն վայելել չեն կարող: Այդ և պատճառը, վոր, որինսկի, անկարելի չե-
յեղել պարզել թե ինչ մարդ և յեղել Ռուսթավելին իր ծագումով՝ ազնվա-
կան, իշխանավոր, թե՛ իր հանճարի ու գործի շնորհիվ պալատական
յերգչի կոչման արժանացած շինական:

Յերկր զգ հանգամանքը, վոր զժաբարացնում և Ռուսթավելու և նրա
ստեղծագործության հետ կապված մի շարք հարցերի լուծումը, այն է, վոր
իշխող դասերը, և առաջին հերթին հողևորականությունը, դարերի ընթաց-
քում «չանասիրաբար» լուսթյան են մատնել «Վագրենավորը» և նրա հե-
ղինակին, իբրև քրիստոնեական հավատի և միջնադարյան բարոյագիտու-
թյան զեմ ծառս յեղած ընդվզում, բանաղբանքի յեն յենթարկել այդ պոեմը
և մի քանի անգամ այցել ու վոչնչացրել են այն, միաժամանակ տարեգրու-
թյունների միջից ջնջելով Ռուսթավելու անունը:

Միայն ժողովրդին ենք պարտական այն ամենի համար, ինչ ճանցել
և մեզ Ռուսթավելուց և Ռուսթավելու մասին: Դարերի ընթացքում՝ «Վագ-
րենավորը» յեղել և վրաց ժողովրդի^{*)} ամենասիրելի գիրքը, վորպիսին
նա պահել և ձեռագրով, պահել և իր սրտում, իր մտքում և վորոցի վորդի
ավանդիլ իբրև ոճիս: Բայց ժողովուրդն իր բանավոր ավանդությամբ չե-
կարող ամեն ինչ պահել և միայն մասամբ և պահպանել այն կարևոր տե-
ղեկություններն ու նյութերը, վոր վոչնչացրել և խախտածիտ կղերք:

Վերջապես գործը զժաբարացնող յերրորդ հանգամանքը պետք է զորո-
նել հենց իրեն՝ «Վագրենավորի» մեջ, վորն իր անորինակ վեհությամբ ու
խորտելությամբ, ընդգրկած պատմական, աշխարհագրական, սոցիոլոգիական
բաղձապարտիկ կողմերով, աշխարհայացքի և աշխարհգիտացողության վորոշ
հակասություններով իրական ու ֆանտաստիկական մոմենտների համա-
դրումով քիչ թվով բնագությունների աղբյուր չի հանդիսացել բանասեր-
ների համար:

Գտնվել են մարդիկ, վորոնք ցանկացել են ամբողջ «Վագրենավորը»
մի ֆանտաստիկական, կամ ավելի ճիշտ այլարանական յերկ համարել, վորի

^{*)} Ի դեպ վրաց ժողովրդի հետ մեկտեղ նաև «Թեֆլիսցի հայերը» միշտ սիրել են
«Ռուսթավելու ու գրածները» ինչպես վկայում և «Վագրենավորի» տալլին հայ թարգմանիչ
Սարգիսը (ըմ. Բաստամյանը) «Կոստանիկ» թարգմտությամբ գրած իր նամակում: Այս Սա-
րգիսը թարգմանությունը տպվեց նույն «Կոստանիկ» մեջ 1860, 1862 և 1863 թվ. համար-
ներում:

³⁾ Վրաց ժողովուրդն այնքան բարձր և գնահատել «Վագրենավորը», վոր նրանով և
վորոշի մարդանց արժանիքն ու մարդավարությունը: Ստորև թարգմանաբար տալիս ենք
գրացական ֆուկտորից մի ընթրող բանաստեղծություն, վոր վերցրել ենք Մ. Զրկովանու
«Ժողովրդական վաղբանավորը» գրքից: Ահա այդ բանաստեղծությունը:

Յես ունեյի մի բարեկերթ,
Շրեկաղարդ, սիրուն աղջիկ,
Ամուսնացրի, ոճիս տփի
«Վագրենավորն» իմ գեղեցիկ:

Կարդացել ու չեյին ըմբռնի,
Այ բեզ իշի հանգի մարդիկ:
Յես ել կրկին հետ վերցրի
«Վագրենավորն» իմ գեղեցիկ:

գալթիք անձինք իբր թե արաբի, հնդկի, չինացու և այլ անուններով ներկայացված վրացի թագավորներ կամ իշխաններ են:

Իրապես, սակայն Ռուսթավելին այլաբանության վրա չի կառուցել իր պոեմը և վոչ ել Վրաստանն և նկատի ունեցել ստեղծագործության ընթացքում:

Լինելով վրաց պատմության վորոշ դարաշրջանի ծնունդ, հարազատ վրացական գրող մնալով հանդերձ, Ռուսթավելին գերաճել և և դուրս յեկել վրաց պատմության և կուլտուրայի սահմաններից ու մտել նուստիստիային, համամարդկային մշակույթի սահմանները՝ հաստատուն կերպով կանգնելով Հոմերոսի, Վիրգիլիոսի, Ֆիրգուսու, Դանթեի և այլ հանճարների կողքին:

2. Ռուսթավելին որինաչափական հաջորդն է իր վրացի նախորդները՝ փայլուն պեղադայի (Շավթելու, Թադգվելու և այլն), բայց նա շատ ավելի առաջ և զննցել և բարձր և կանգնած նրանցից: Նա ընդգրկել և վարպետությամբ համադրել է Արևելքի և Արևմուտքի արվեստն ու փիլիսոփայությունը. նա սնվել և վոչ միայն Վրաստանի կարկաշուն աղբյուրներով ու ջերմ արևով, այլև Իրանի վարդերի բույրով, Արաբիայի լալն հորիզոնի ծիածանի գույներով, Հոմերոսի վճիռ շնչով, հունական դասական փիլիսոփայության և իմաստության ծառի պտուղներով:

Արևելքն և տվել Ռուսթավելուն նաև նրա պոեմի ֆարուսային մասը, ինչպես ինքը բանաստեղծն և հիշատակում իր պոեմի նախնադանքում, և Արաբիայում, Հնդկաստանում ու Ասորիքում և ծավալվում «Վագրենալորի» շողջողուն եպոպեայի գործողությունը՝ հասնելով մի կողմից մինչև Հարավային ու Հյուսիսային Չինաստան, մյուս կողմից՝ Վենետիկ ու Ջերբալտար, ինչպես մեկնում և «Վագրենալորի» Գուլանդարո և Գաջիթի տեղանունները Ա. Սվանիձեն *):

Եթե Ռուսթավելին ծնունդ և վրաց պատմության այսպես կոչված վաղեմության, վորը կապված է թամար թագուհու անվան հետ և բռնում է 12-րդ դարի վերին ու 13-րդ դարի սկիզբը:

Դա մի ժամանակաշրջան էր, յերբ բյուզանդական կայսրության կախումից ազատագրված և նրա փլատակների վրա տնտեսական և քաղաքական կենտրոնաձիգ ուժի մղումով միավորված վրացական ցեղերը գտնվածեցին մի ուժեղ պետություն և չտեսնված չափերով ընդարձակեցին Վրաստանի սահմանները դեպի հարավ և դեպի արևելք: Այդ միավորումը և արտաքին խանգարիչ ուժի ժամանակավոր բացակայումը կուլտուրական մեծ առաջընթացի հնարավորություն ստեղծեցին վրաց ժողովրդի տաղանդավոր ժողովների համար, վորոնցից առաջնադուչը «Մեսիս վոմի Ռուսթավելին» էր, վորն իր «Վագրենալորը» պոեմով բարձրացավ համաշխարհային պոեզիայի դագաթը:

*) „Новый мир“, 1936 г., № 9, стр. 255.

Արեւաշող Վրաստանի բորբաշուենչ աչք հանճարը ժողովրդական ֆան-
տաղիայի և Արեւելքի դիցաբանության մոտիմներին գործեց մի հրաշալի
դիպակ, վորն իր կախարդական գորութեամբ, իր բաղմիրանդ վայլով հմա-
յոււմ ե գիտողին և նմանը հունի իր մանրամասները վերտուող կերտված-
քով ու ձուլածո ամբողջականութեամբ:

Իր պոեմի հենքը հյուսելիս Ռուսթավելին վերցրել ե լերկու գույնի
նուրբ ասվյա թելեր՝ վոսկեվառ և արեւաշող, իրեն նշան մի կողմից Ավթան-
դիլ-Թինաթին, մյուս կողմից Տարեւել-Դարեւան գուլգերի բոցաշունչ և
անվերապահ սիրո:

Այլ յերկու նվիրական ու վեհ, կարծես նույնական, բայց յերանգային
նուրբ տարբերութեաններով իրար լրացնող սերերի համար բնորոշ վոս-
կեվառ ու արեւաշող թելերից հյուսած հենքի վրա Ռուսթավելին կաթեցրել
ե իր արցունքի վճիտ կաթիլները, ապա արևի շողերն անցկացնելով իր ար-
ցունքի շիթերի միջով ու այդ ստեղծված ծիածանի յոթ գոյներով՝ ասեղ-
նադործել ե իր անձեռագործ դիպակը:

3. «Վագրենավորը» եպոպեան, ինչպես արդեն ասել ենք, սիրային
ֆաբուլայի վրա յե կառուցված. սերն այն հիմնական պրոբլեմն ե, վորի
շուրջը հյուսել ե յուր անգին դիպակը Շոթա Ռուսթավելին: Պոեմի նա-
խերգանքն իսկ աչք ե վկայում:

Ռուսթավելին սիրո նկատմամբ ունի յուր, կարելի յե ասել, ուսթա-
վելական հայացքները: Ահա դրանք.

Սիրահարը պետք ե լինի արևի պես չքնաղ ու վառ,
Առատաձեռն և ունեւոր, ազատ դուրեցազն ու զորավար,
Կովում հաղթող, յերկարամիտ, մտքով հարուստ, լեղվով ճարտար.
Ում լիովին չի տրված այս, չի կարող լինել սիրահար:

Ասերն ե դյուրիչ և սքանչելի, խորախորհուրդ ե և գովար,
Չպետք ե նույն դասը դասել և՛ ցանկասեր, և՛ սիրահար.
Մար ու ձոր կա յերկուսի մեջ, տարածութեան ուկկան անծալը.
Լավ լսեցեք իմ այս խոսքը և մի խառնեք դրանք իրար...

Սիրահարը շնացող չե, նա հաստատ ե, հավատարիմ,
Այս ե քաշում յարից բաժան և անդադար հիշում յարին.
Թեկուղ լինի խիստ ու դաժան, յարն ե տերը, ինքը՝ գերին.
Ի՞նչ ե գգվանք, գրկանք, համբույր, յերբ չկա սեր, սիրտ մտերիմ...*)

Իր այս հայացքները Ռուսթավելին մարմնացրել ե ի դեմո պոեմի
յերկու գուլգ սիրահարների՝ Ավթանդիլի ու Թինաթինի և Տարեւելի ու
Նեստան-Դարեւանի: Իր բարձր իդեաները պատկերավոր ու շոշափելի
դարձնելու համար Ռուսթավելին միահյուսել ե յերկու գուլգերի սիրո ճա-

*) Վերցրել ենք Վահան Տերյանի թարգմանութունից:

ապագային, այդ յերկու սերերը փոխադարձաբար պայմանավորել իրարով և իր «արեւի պես չքնաղ ու վառ» սիրահարների իղձն իրագործել հետոսական մի շարք սխալագործությունների, անհամար փորձությունների ճանապարհով:

Տեսնենք թե ինչպիսի մոգական ուժով և կարողացել Ռուսթավելին միահյուսել յերկու տարբեր դուլգերի սերերը, իբրև հենք յուր «Վազրենաւորը» պոեմի:

Արարիտյի Ռոստեման թագավորի միակ դուստրը և միաժամանակ գահաժառանգը—Թինաթինը և չերկրի քաջ սպարապետ Ավթանդիլն իրար սիրում են, բայց գաղտնի յեն պահում այդ սերը: Վոչ մի հանգամանք չէ լսանգարում, վոր նրանք բացին իրենց սերը և բախտավորվեն: Անսպասելիորեն չերևան և գալիս վաղրի մորթով քողարկված մի խորհրդավոր հերոս (վազրենավորը), վորի առատ արցունքը, անլուր վիշտը և կորցրած սիրահարին գտնելու պատճառով սարեսար ընկած լինելը դառնում և Ավթանդիլի ու Թինաթինի սերը բացելու բռնակին, իսկ վազրենավորի, այն և Տարիելի կորցրած Դարեջանին գտնելը՝ Ավթանդիլի ու Թինաթինի սերը պսակելու պայմանը:

Ավթանդիլն իր սեփական ներքին մղումով և Թինաթինի պատվերով իրենց բախտը կապում և Տարիելի սիրահարին գտնելու փորձությունների հետ և վտանգավոր ու անորոշ ուղիների ցուպը ձեռքին առած վորոշում և կորած ու գերված Դարեջանին:

Անթիվ ու անհամար փորձությունների, ասպետական ամենավեհ սըլաքագործությունների այդ բոլոր դառնություններին Ռուսթավելին միաժամանակ մասնակից և անում նաև մի յերրորդ անձնավորության՝ Փրիդոնին, վորը նվիրվում և Տարիելին ընկերական խորագույն կապերով և անվերապա հավատարմությամբ:

Ավթանդիլն ու Տարիելին վերջապես հաջողվում և Փրիդոնի ոգնությամբ ազատել Դարեջանին Գաջնթի ամրոցից, և Տարիելի ու Դարեջանի բախտավորությունն Ավթանդիլի ու Թինաթինի չերջանկության դուռն և բացում:

Այսպիսով չերեք տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների՝ Ավթանդիլի, Տարիելի ու Փրիդոնի նվիրված, անկաշառ և հավատարիմ դաշինքը նվաճում և գերված արևը, կյանք տալիս նրան և աշխարհը ջերմացնում նրա պայծառ ու սնիչ շողերով:

Պոեմի վերջին գլուխները փայլուն, կենսաթխնդ, առողջ ու ներդաշնակ կյանքի հաղթանակի մի կատարյալ ապրթեոջ են հանդիսանում, շողափթիթ և հարածուկի կյանքի մի ջերմ բարախ, վորպիսի կատարելության Ռուսթավելին իր հերոսներին հասցնում և հակառակ ճակատագրի, նախախնամության, յիկեղեցական նախապաշարմունքների, նեղ, սխալաստիկ այն աշխարհյացքի, վորպիսին իշխում եր միջնադարում:

Ռուսթավելին այսպիսով բարձր և կանգնած միջնադարից, նա խորտակում և միջնադարի բարոյագիտությունն ու գեղագիտությունը, նա-

խակարապետն և հանդիսանում ու կանխորոշում 1—2 դար հետո Յեզեքիայում թագավորող վերածնունդը:

Ռուսթավելու «Վազրենավորից» հանվող յեզրակացութունները կարելի չեն հետևյալ ձևով բնութագրել.

ա) Սիրել ծփուն ու ծիածաններանգ, լիարյուն, այսկողմյան կյանքը, վերելքադրությունը ձեռք են բերվում պայքարով ու տքնությամբ.

բ) Սրհամարոնել սին, «անդրգերեզմանային» կյանքը, մերժել ֆատալիզմն ու խավարամտությունը.

գ) Այլել ու պայքարել մարդկայնորեն, տողովել բարձր հումանիզմով, մարդասիրությամբ՝ սեփական լերջանկությունն ուրիշների յերջանկության վրա հենելով.

դ) Հաստատակամորեն և անձնվիրաբար պայքարել կյանքի գեղեցկությունն ու մարդկանց յերջանկությունը խախտող բոլոր ուժերի և արգելքների դեմ՝ հանուն լուսավոր ու արևաշող կյանքի, հանուն նրա լիարյուն բարախի:

Այս յեզրակացությունները, վոր բղխում են «Վազրենավորից», մաքուր և անշահախնդիր սիրո ուրինակի հետ միասին կաղմում են Ռուսթավելու պատգամը և ներդաշնակ են մեր որերին, սնում են ապրելու, կյանքը սիրելու, թշնամիների դեմ, անխնայորեն պայքարելու, հաղթանակից-հաղթանակ գնալու այն մեծ և նվիրական զգացմունքն ու կամքը, վորով համակված են Ստալինյան համաստեղության յերկրների բոլոր ժողովուրդները:

Ի դեպ ալլ իդեաների, ալլ էենաստիրության և հումանիզմի համար եր, վոր «Վազրենավորն» ու Ռուսթավելին հալածվում էյին հոգևորակաշուրթյան կողմից դարերի ընթացքում և դարձյալ ու դարձյալ դրա համար ե, վոր վրաց ժողովուրդը սիրել և է իր սրտում անմահ պահել յուր անմահ Շոթայի գործն ու հիշատակը:

Ուտիմիզմի այս շեղելը Ռուսթավելին տվել և արտահայտական հզորագանցված գրսելորմամբ, լեզվական հեշական մի այնպիսի սիմֆոնիայով, վորի կատարելությունը զմայլանք և միաժամանակ զարմանք և պտտառում յուրաքանչյուրին, ով ի վիճակի չէ «Վազրենավորը» բնագրով կարդալու: Տագաչափության այն ձևը, վոր մտքից վրաց գրականութան մեջ Շոթան, այսպես կոչված ճախրին, զարմանալիորեն ներդաշնակում և բույանդակությանը, իսկ լիզվի պատկերավորությունը, հանդերի հարստությունը, թարմ ու անմար համեմատությունները, վորոնք գունավորում են «Վազրենավորի» հույզերն ու մտքերը, յերկար դարեր ընդորինակման աղբյուր յեղան վրաց հետագա գրողների համար:

Առանձնապես հարուստ է Ռուսթավելու լեզուն աֆորիզմներով, խորիմաստ, հակիրճ արտահայտություններով, վորոնք վարուց թափանցել են վրաց ժողովրդի մեջ և դարդարել ու դարդարում են նրա բաժակաճառերը, նրա սակեմագործությունը և վողջ կենցաղը: Թե գլուղում, և թե քաղաքում, ամենուրեք կհանդիպեք ջահել ու անել, դրագետ ու կիսագրագետ

Վրացիներին, վրոնք չափածո կամ արձակ պատմում են Տարիելի եպոպեան, հաճախ անդիր արտասանում են «Վազրենավորից» գլուխներ և ամեն քաջավորում մեջ բերում Ռուսթավելու մի հարմար ու դիպուկ աֆորիզմ: Վրաց ժողովուրդը յուր հանճարի անունն ու ստեղծագործությունը 750 տարի պահել և իր սրտում իբրև իր ամենանվիրական սրբությունը, վեջ պական սիրով ու գորովով կպահպանեն այսուհետև այդ մեծահանճար քանաստեղծի, սիրտ, ուղտիմիզմի և խոր հումանիզմի 750-ամյա այդ յերգչի անունն ու նրա անմահ ստեղծագործությունը նաև այն բոլոր ժողովուրդները, վրոնք զժբախտաբար շատ ուշ են ծանոթանում պոեզիայի արեգնաշող դադաթին:



ՇՈԹԱՆՈՒՄԱԿԱՆԵՐ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ)

1937 թվի դեկտեմբերին լրացավ յեղբայրական վրաց ժողովրդի հանձարեղ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու «Վազրենավորը» անաման պոեմի 750-ամյակը։ Խորհրդային Վրաստանի հետ միասին ԽՍՀՄ-ի յեղբայրական հանրապետությունների բոլոր ժողովուրդները նշեցին այդ փառապանծ 750-ամյակը։

Կենսագրական քիչ տեղեկություններ կան Շոթա Ռուսթավելու մասին։ Շոթա Ռուսթավելու կյանքն ու գրական գործունեությունն ուսումնասիրող գրականագետներին դեռևս չի հաջողվել վերականգնել բանաստեղծի ամբողջական ու ստուգված կենսագրությունը։ Գրավոր պատմությունը լուռ է Ռուսթավելու մասին։ Քրիստոնյա խավարամիտ հոգևորականությունը Ռուսթավելուն հռչակելով հերետիկոս, ամեն կերպ աշխատել է ջնջել նրա անունը պատմության գրքից։ մեծ բանաստեղծի հիշատակն իսպառ վերացնելու համար այդ հոգևորականությունը լերկու անգամ հանդիսավոր կերպով խաբուելի վրա այրել է «Վազրենավորը», մեկ անգամ՝ թափել Դուռ դետու Սակալան, չնայած դրան, շնորհիվ Շոթա Ռուսթավելու և նրա հանձարեղ ստեղծագործության չտեսնված ժողովրդականության, վրաց աշխատավոր ժողովուրդը սերնդից-սերունդ ավանդելով խնամքով պահպանել է թե «Վազրենավորը» բազմաթիվ վարիանտներով, թե կենսագրական վորդտեղեկություններ նրա հեղինակի մասին։ Ի մի բերելով «Վազրենավոր» պոեմում բանաստեղծի իր մասին արած հիշողությունները, ժողովրդական բանահյուսության և նյութական կուլտուրայի տվյալները, ինչպես և գուգադրելով պոեմի բովանդակած պատմական բնույթի հիշատակությունները պատմական փաստերի հետ, կարելի չե մոտավոր ճշտությունը ուրվագծել բանաստեղծի կենսագրությունը։

Անկասկած է, վոր Շոթա Ռուսթավելին ծնվել է 12-րդ դարի վերջին և իր հոգևակալոր պոեմը գրել 13-րդ դարի առաջին քառորդում, այսինքն պատմական մի ժամանակամիջոցում, յերբ րյուզանդական կայսրությունը, իբրև այդպիսին, ժամանակավորապես զաղարել էր գոյություն ունենալ (1204—1261 թ. թ.), և յերբ դեռ տեղի չեր ունեցել մոնղոլների արշավանքը։ Եւ Չինգիզխանն իր տիրապետությունը չեր հաստատել Առաջավոր Ասիայում (1235—1238 թ. թ.)։

Այն հանգամանքը, վոր վրաց գրականության մեջ մինչև 17-րդ դարը վոչ մի հիշատակություն չկա Շոթա Ռուսթավելու մասին և «Վազրենավորի» պահպանված ձեռագրերն ել այդ դարից առաջ չեն անցնում, շատերին առիթ ե տվել կարծելու, վոր Շոթա Ռուսթավելին շատ ավելի ուշ ժամանակի հեղինակ ե:

Սակայն հենց «Վազրենավոր» պոեմից ել յերևում ե, վոր Ռուսթավելին իր լերիլ ձոնել ե ժամանակի նշանավոր թամար թագուհուն, վորը թագավորում եր 1184—1213 թ. թ.-ին:

Այն դարաշրջանը, լերը Շոթա Ռուսթավելին գրել ե իր պոեմը, համարվում ե պատմական Վրաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի ծաղկման վոսկիդարը: Մինչ այդ Վրաստանը բաժանված եր առանձին մանր իշխանությունների, վորոնք բոլորն ել գտնվում եյին արաբական հզոր պետություն զերիշխանության տակ: 10-րդ դարից սկսած արաբական պետությունն սկսում ե հետգհտե թուլանալ և նրա գերիշխանության յենթակա ժողովուրդները նրանից անջատվում ու անկախություն են ձեռք բերում: Դրանց թվում առաջիններից մեկն եր և վրաց ժողովուրդը:

Քաղաքական անկախության հողի վրա վրաց ժողովրդի կյանքում տեղի չե ունենում տնտեսական ու կուլտուրական բուռն վերելք: Շոթա Ռուսթավելին, վրաց ժողովրդի հանճարեղ բանաստեղծը, հենց այդ դարաշրջանի ծնունդ ե: Անշուշտ Շոթա Ռուսթավելին այդ ժամանակի վրաց գրականության ամենաակնառու, ամենահանճարեղ բանաստեղծն եր, սակայն վոչ միակը: Այդ շրջանի լավագույն բանաստեղծներից են, որինակ, քնարերգուներ՝ Շավթելին և Ջախրուխան, վորոնք տվել են մինչև այժմ տեխնիկապես չգերազանցված ներբողներ:

Շոթա Ռուսթավելին ծնվել ե, ինչպես ասացինք, 12-րդ դարի վերջերին Ռուսթավի ավանում, վորից ել, բանաստեղծն ստացել ե իր կրթումը՝ Ռուսթավելի (վոր նշանակում ե Ռուսթավեցի): Ժողովրդական ավանդությունն ասում ե, վոր նրա հայրը՝ Ջախրուխան՝ Ռուսթավի տերն ե յեղել: Նա աչքի յեր ընկնում իր բանաստեղծական ձիրքով՝ վոտանավորներ եր գրում և ձանաչված եր վորպես «քաղցրախոսիկ յերգիչ և թունոտ բանաստեղծ»:

Ըստ ժողովրդական ավանդության, Շոթա Ռուսթավելու ծննդյան օրը նրա հայրը Պատեբաշնի գյուղում հարսանիքի ժամանակ թունավորվում ե ֆեոդալների ձեռքով և մահանում: Այսպիսով Ռուսթավելին հոր յերեսը չի տեսնում և ծննդյան օրից վորը ե մնում: Նրա դաստիարակության մասին հոգ ե տանում հորեղբայրը՝ Շոթան նախնական կրթությունն ստանում ե Իմպոլի յեկեղեցական դպրոցում, ցույց տալով մեծ առաջադիմություն: Այնուհետև հորեղբայրը ուղարկում ե նրան մօր կողմից ազգական՝ Աթաբեկի մոտ՝ Զարգմա:

Շոթա Ռուսթավելին այստեղ սովորում ե յերեք տարի, Տիսնելով Շոթայի յերևան բերած փայլուն ընդունակությունները, ազգականները նրան ու-

դարձուի են Ինքնավար ակադեմիան (Կախեթի), վորտեղ սովորում է ևս չորս տարի:

Ակադեմիայում պատանի Շոթան հռչակվում է իբրև կաղձակերպ՝ վաճ բանաստեղծ: Նրա տաղանդը բոլորին հիացմունք ու զարմանք է պատճառում: Տաղանդավոր բանաստեղծի համբավը հասնում է Թամար թագուհուն:

Թամարը նրան ուղարկում է Հունաստան իր կրթութունը շարունակելու: Թագուհին սովորաբար ամեն տարի Վրաստանից 30 լերիտասարք էր ուղարկում Հունաստան՝ փխիսոփայական կրթութուն ստանալու: Շոթա Ռուսթավելին, Հունաստանում վեց տարի մնալուց հետո՝ 23—24 տարեկան հասակում վերադառնում է հայրենիք և շարունակում է զբաղվել գրական գործունեությամբ: Բացի այդ, Շոթա Ռուսթավելին, Մեսխեթի առաջավոր յերիտասարդութանն իր շուրջը հավաքելով, դպրոցներ է բաց անում և ժողովրդին կոչում դեպի գիտութուն և լուսավորութուն:

Ըստ ժողովրդական նույն ավանդության, Թամար թագուհին Շոթա Ռուսթավելուն հրավիրում է իր մոտ, պալատը, և նշանակում է նրան մի տեսակ պետական դանձապահ, թե՛ քարտուղար: Ժողովրդական մի այլ ավանդությամբ Շոթա Ռուսթավելին մնում է պալատում, վորպես Թամար թագուհու պալատական յերգիչ: Այդ ժամանակ Շոթա Ռուսթավելու մեծ յեղբորը՝ Ավթանդիլին դժբախտություն է պատահում: Ավթանդիլը սիրում էր Թամար թագուհուն, բայց վերջինս մերժում է նրան և ամուսնանում առասացարքայորդու՝ Գեորգիի հետ: Կարոտից ու հուսահատութունից մզված, Ավթանդիլը լքում է իր հայրենիքն ու փախչում ոտար յերկրներ և ճամբին մահանում է: Յեղբոր վոգրերգական վախճանը Շոթա Ռուսթավելուն առիթ է տալիս «Վագրենալորը» պոեմը գրելու: Նա իր յերկը ձոնում է Թամար թագուհուն: Պոեմի հանդիսավոր ընթերցում է տեղի ունենում պալատում: Հանձարեղ ստեղծագործութունը բոլորին հիացմունք է պատճառում: Թամար թագուհին առատաճեռությամբ վարձատրում է Ռուսթավելին: Հերթական հաղթանակով սքանչացած՝ բանաստեղծը յերջանիկ է զգում իրեն:

Այդ միջոցին Թամարը Վրաստանի սահմաններից հեռացնում է իր ամուսնուն և, քանի վոր վաղուց սեր էր տածում դեպի Շոթա Ռուսթավելին՝ առաջարկում է նրան բաժանվել իր կնոջից և ամուսնանալ իր հետ:

Շոթա Ռուսթավելին մերժում է թագուհու առաջարկը: Բանաստեղծի մերժումից վիրավորված, Թամարն ստիպում է Ռուսթավելուն տեղափոխվել Հունաստան:

Վրաց աշխատավոր ժողովուրդն իր սիրելի բանաստեղծի կյանքի յուրաքանչյուր նշանակալի մոմենտի մասին բաղձաթիվ վարիանտներ է պատմում: Այստեղ բերվածը Շոթա Ռուսթավելու կենսագրության ամենաժողովրդական վարիանտներից մեկն է, վորը միաժամանակ ամենից մոտ է ճշմարտության:

Շոթա Ռուսթավելու հունական կրթութիւնն ստանալու վերաբերյալ ավանդութիւնը հիմքից զուրկ չէ:

Ռուսթավելին իր պոեմում խորը ծանոթութիւնն է հանդես բերում անտիկ փիլիսոփայութեան և գրականութեան: Նա միաժամանակ լավ ծանոթ էր հունական և արաբական գրականութեան: Ընդհանրապես Շոթա Ռուսթավելին կանգնած էր իր դարաշրջանի կուլտուրայի բարձունքների վրա և իր ժամանակի ամենագարգացած մարդկանցից մեկն էր: Իրան-արաբական և հուլն—բյուզանդական կուլտուրաները հանձինս Շոթա Ռուսթավելու գտան իրենց փայլուն արտահայտիչը: Շոթա Ռուսթավելու «Վազրենավորը» Արեւելքի և Արեւմուտքի կուլտուրաների փոխադրեցութեան արդյունք է, այդ կուլտուրաների յուրատեսակ համադրութիւնը:

Համաշխարհային գրականութեան տիտաններից Շոթա Ռուսթավելու վրա ազդեցութիւն են ունեցել մի կողմից Հոմերոսը, մյուս կողմից Ֆիրդուսին, Նիզամին և ուրիշները: «Իլիական»-ն ու «Վոդխական»-ը, «Շահ-Նամե»-ն, «Լեյլի և Մեջնուն»-ը և այլն Ռուսթավելու քաջածանոթ ու սիրված լեռիներն են յեղել:

Չափազանց ընդարձակ էր Շոթա Ռուսթավելու հորիզոնը: Նա պարզ պատկերացում էր այն աշխարհը, վորը հայտնի չէր դարաշրջանի կուլտուրական մարդկութեանը: Պոեմում հիշատակված յերկրները՝ Չինաստան, Հնդկաստան, Արաբիա, Յեգիպտոս, Հոմ և այլն, ինչ վոր հեքյաթային, մշուշապատ գաղափարներ չէին նրա համար. նա գիտեր այդ յերկրները, ծանոթ էր նրանց ժողովուրդների կյանքին, նյութական ու մտավոր կուլտուրային, նրանց պատմութեանը: Հատկապես Արեւելքին իր ծանոթութեամբ՝ ավելի քան յերկու դարով նա առաջ է անցել յեվրոպական աշխարհագրագետներից: Շոթա Ռուսթավելին լինելով 12-րդ դարի հեղինակ, ապրելով ու ստեղծագործելով ֆեոդալական հասարակարգում, այնուամենայնիւ, իր մեծ հանճարի ու խոշոր երուրիցիայի շնորհիւ կարողացել է ջաբդել քրիստոնեական գաղափարախոսութեան և միջնադարյան մտածողութեան շղթաները, միաժամանակ նա կարողացել է փշրել ազգային սահմանափակութեան շրջանակները և կանգնել համամարդկային պրոբլեմների բարձրութեանը, մնալով միաժամանակ իր ժողովրդի ամենից հարգաւոր, ամենից սիրված յերգիչը:



ՇՈԹԱՆՈՒՄԹԱՎԵԼՈՒ ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ»

(ՊՈԵՄԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ)

1

«Ով սիրածին չի վորոնում,
Նա ինքն իրեն թշնամին է»:

Արաբիայում ապրում էր Ռոստեմիան թագավորը: Նա աղաներ չունեց
և վորոշեց գահ բարձրացնել իր աղջկանը՝ Թինաթինին: Այս նպատակով
նա կանչեց իր վեդիրներին և խորհուրդ հարցրեց նրանցից: Թագավորագ-
նունին խելացի և կրթված աղջիկ էր: Նա վճռական բնավորությամբ ուներ:
Վոչնչով չէտ չէր մնում աղամարդկանցից: Վեդիրները պատասխանեցին.

«Վորյունն առյուծ է ի ծնե,
Միկնուշն ես եզ և արու»:

Թինաթինը թագունի դարձավ: Նա շքեղ խնջույք կաղմեց, վողջ ժո-
ղովուրդը հրավիրեց և բոլորին հարուստ նվերներ բաժանեց:

Մեկ անգամ Ռոստեմիանը վորսի գնաց իր մերձավորներին հետ: Արանց
թվում էր գտնվում նաև յերիտասարդ զորավար Ավթանդիլը, վորը քաջ և
համարձակ մի ռապետ էր: Ավթանդիլը սիրում էր Թինաթինին և հանուն
նրա՝ վորսի ժամանակ բոլորից աչքի ընկավ իր ճարպկությամբ և ուժով:

Յերբ վորսը վերջացրին, նրանք մի տարորինակ դյուցազուն հանդի-
պեցին, վորը նստած գետակի ափին բարձրաձայն հեկեկում էր: Նա իր
զրահների վրալից հագել էր վագրի մորթի: Նրա մոտ հարուստ սարքով
կանգնած էր սևաթույր նոսր զգը:

Թագավորը դյուցազունի մոտ ուղարկեց իր ծառաներին: Դյուցազունը
սկզբում բութբութի ուշադրությամբ նշարձրեց ծառաների վրա, իսկ հետո չա-
փազանց դայրացավ և մտրակով խաբաղանեց բոլորին:

Ռոստեմիանը և Ավթանդիլն ոգնությամբ հասան, սակայն դյուցազունը
արագությամբ նստեց իր ձին և անհետացավ:

Այս խորհրդավոր դեպքի մասին լսելով՝ Թինաթինը նա հրամայեց Ավ-
թանդիլին գնալ ու փնտրել վշտոտ անձանդին:

Ավթանդիլը յերկար ժամանակ ճանապարհորդում էր, հարցնում յու-
րաքանչյուր հանդիպողի, բայց վոչ վոք վոչինչ չգտնեց վագրենավոր դյու-
ցազունի մասին:

Մեկ անգամ նա մի խումբ ձիավորների հանդիպեց: Նրանք մահացու կերպով վիրավոր մի պատանու էյին տանում: Այդ պատանուն վիրավորել էր մի անհայտ դուռացուն՝ սևաթույր նժույգի վրա:

Ավթանդիլին ցույց տվին հեռվում մի սև կետ: Նա արշավեց այդ ուղղությամբ և տեսավ, վոր դա—վագրենավոր դուռացուն էր:

Վորպեսզի վերջապես իմանա, թե վճռեղ և թագնվում դուռացունը— Ավթանդիլը ծածուկ հետապնդեց նրան, Յերկու ուր անց նրանք մի մենավոր այլ հասան: Ավթանդիլը պահեց իր ձին, ծառը բարձրացավ և սկսեց դիտել: Այրից մի կին դուռս յեկավ: Նա գրկեց դուռացունին և նրանք միասին հեկեկացին:

Առավոտյան, յերբ դուռացունը ելի ինչ վոր տեղ գնաց, Ավթանդիլը դուռս յեկավ իր թագստոցից: Նա կնոջը հարկադրեց լսելու իրեն և կինը համոզվեց, վոր Ավթանդիլն իսկապես ուղում է ողնել իրենց: Կինը նրան թագքրեց այլի մեջ: Յերբ դուռացունը վերադարձավ, նա վարպետորեն նախապատրաստեց նրան՝ նոր ընկերոջ հետ հանդիպելու:

Նրանք հանդիպեցին հարազատ յեղբայրների նման: Հենց նույն յե-
րեկո նրանք յերեքով նստել ելին խարուկի շուրջը և Ավթանդիլը լսեց
վագրենավոր պատանու դուռացը, վորին Տարիել էյին անվանում:

2.

«Վիշտն է, վոր մարդ պիտի տանի,
Խինդը ինքնին հեշտ է արդեն»:

«Մարդը պետք է միշտ աննկուն
Ու քաջ լինի վշտի առաջ»:

Հնդկաստանում թագավորում էր Փարսաղան թագավորը: Նա հարա-
զատ վորդիներ չուներ, այդ պատճառով ել դաստիարակում էր և իրեն
ժառանգելու պատրաստում իր վորդեղբաժ աղային՝ Տարիելին: Յերբ Տա-
րիելը չինդ տարեկան դարձավ, թագուհին ծնեց մի աղջիկ, վորին Նե-
ստան-Դարեջան անվանեցին:

Աղջիկը շատ գեղեցիկ էր: Յերբ մեծացավ, նրան փակեցին մի աշտա-
րակում, վորտեղ նա մեծանում էր, սակայն վոչ վոք չէր տեսնում նրան:

Այսպես շատ տարիներ անցան:

Մեկ անգամ թագավորը հրամայեց Տարիելին՝ վորոք տանելու Նես-
տան-Դարեջանին: Յերբ Տարիելը տեսավ Նեստան-Դարեջանին՝ ու-
շաթափվեց, այնքան գեղեցիկ էր թագավորազնունին: Այդ բոպե-
յից նա սիրեց նրան իր վոզը կյանքում, և վորովհետև չէր տեսնում
նրան՝ թախծում էր: Թագավորազնունին ել սիրեց գեղեցիկ պատանուն,
բայց չհավանեց նրա թուլությունը: Նա իր նաժիշտի միջոցով հայտնեց
Տարիելին, վոր արցունքներ և ուշադնացության փոխարեն նա պետք է
ցուցարների քաջություն և հերոսություն:

Տարիելը դորք հավաքեց և փառավոր հաղթանակ տարավ Հնդկաստանի թշնամիներին՝ խաթալեցիներին դեմ։ Այս առթիվ խնջույք հրավիրեցին և այս փնջույքին զեղեցկուհի Նեստան-Դարեջանը հանդիպեց հերոս Տարիելին, վորի ձեռքը վիրավորված էր։

Նեստան-Դարեջանն ու Տարիելն ավելի ու ավելի ելին սիրում իրար և մտածում ելին, վոր աշխարհում վոչ վոք նրանց չի կարող բաժանել։

Բայց այդպես չէին մտածում Նեստանի ծնողները...

3

Մեկ որ ել թագավորն ու թագուհին Տարիելին կանչեցին խորհրդակցելու՝ Նեստանին ամուսնացնելու մասին։ Փարսագանը Դարեջանին հարձար դույզ էր հաճարում խորեզմական թագավորազնին։ Տարիելը տվեց իր համաձայնությունը... Իսկույն սուբանդակներ ուղարկեցին Սորեզմ և փնտցուէին Հնդկաստան հրավիրեցին։

Այս վորոշման և Տարիելի համաձայնությունից մասին լսեց Նեստանը և հանդիմանեց Տարիելին։ Տարիելը բացատրում է, վոր անմոռություն էլի-նք հակառակվել թագավորի կամքին և մատնել իրեն։ Նեստանը խորհուրդ և տալիս Տարիելին, վորդեհադի սա սպանի փնտացուէին, վորը գալու չե Հնդկաստան, և իբրև Փարսագանի ժառանգ տիրանա գահին ու ամուսնանա իր հետ։

Սորեզմի թագավորազնին իր մերձավորներով գալիս և և պալատի շուրջը տեղավորվում է վրաններում։

Տարիելը դիշերն սպանում է փնտացուէին և փակվում է իր ամրացում, ամեն կողմից իր ձուռ կանչելով իր անհամար զորքերին։

Լսելով, վոր աղջիկը մասնակցել է այս սպանությունը, Փարսագանը յերգվում է սպանել նրան, ով դատարարակել և Նեստանին։ Իսկ նրա դատարարակուհին Դավարն էր, Փարսագանի քուրը, վոր ալրիացել էր «քաջքերի» յերկրում (զերմնակտն հատկությունների տեր, հեքիաթային եյակներ)։ Դավարը նախ ձեռնեց Նեստանին և հանձնելով իր ծառաներից՝ քաջքերից յերկուսին՝ պատվիրեց նրան տանել մինչև «ծովի պորտը», վրանեց նա մեռնի ծառավից (ծովի ջուրն աղի չե)։

Քաջքերը Նեստանին տանում են ծովի խորքը։ Այս բանը տեսնում է Նեստանի ընկերուհին՝ Ասմաթը և հայտնում է Տարիելին։

Տարիելը վերցնում է իր ռազմիկներին ու ծառաներին, նաև Նեստանի նաժիշտին՝ Ասմաթին ու նախով ճանապարհ ընկնում... Սմբողջ տարին Նեստանին փնտրելուց և իբր ռազմիկներին կորցնելուց հետո (բացի յերկուսից և Ասմաթից) նա ափ և դուրս գալիս ինչ վոր քաղաքի մոտ։ Այստեղ նա հանդիպում է զեղեցկազեմ դուքսազն Փրիզոնին, վոր այդ ծովափնյա յերկրի թագավորն էր։ Փրիզոնը հրավիրում է Տարիելին և վորսորդության ժամանակ պատմում է, վոր մեկ անգամ, այդ նույն բլրի վրայից հետևյալ տարրերնակ յերևույթն է տեսել։

Մովի վրա անհավանական արագությամբ սուրում էր մի մակույկ, վորը շուտով ափի մոտ կանգ առավ։ Մակույկից յերկու սեամորթ

տարուկներ դուրս յեկան և ափ հանեցին մի կնոջ, վորի դեմքի փայլը ջուսավորեց վողջ շրջակայքը: Փրիդոնն իր կայծակնաալաց նժույգով հետապնդեց նրանց, բայց նրանք նորից ծովի խորքը գնացին: Տարիելն այս լսելով դառն արցունք թափեց և պատմեց Փրիդոնին իր վիշտը, համոզված լինելով, վոր Փրիդոնի տեսած գեղեցկուհին՝ ինքը — Գարեջանն եւ Փրիդոնը հանգստացրեց նրան և ուղարկեց իր մարդկանց՝ փնտրելու Նեստանին: Սակայն այդ մարդիկ դատարկ վերադարձան: Տարիելն հրաժեշտ և տալիս Փրիդոնին, ընդունում նրա նվերը՝ նշանավոր սև ձին, և սկսում և թափառել ամեն կողմ, փնտրելով իր սրտի սիրածին: Բայց զո՛ւր... Նա հուսահատության և հասնում, խուսափում և մարդկանցից և անապատների խորքում մի այլ գտնելով, վո՛նչացնում և հսկա քնակիչներին՝ դեկերին, ու վողջ մնացած Ասմաթի հետ ապրում և այդ այլրում: Տարիելը չի մոռանում իր սիրածին Նեստան-Գարեջանին, նրա անմոռաց պատկերը վազրի նմանեցնելով՝ ինքը վազրի մորթի յե կրում շառունակ:

Այսպես վերջացրեց Տարիելն իր պատմությունը:

4

Ալթանդիլը նույնպես պատմեց, թե ով և ինքը և ինչ նպատակով են նրան ուղարկել: Նա խոսք տվեց Տարիելին շատով վերադառնալու և շտապեց Արարիա:

Ռոստեկանը, Թինաթինը, վողջ ժողովուրդն ու զորքը շատ ուրախացան նրա վերադարձին: Նա պատմեց իր տեսած դուշադնի դարձանալի անցուղարձի մասին: Նա հայտնեց Թինաթինին, վոր շտապում և ոգնելու իր դժբախտ ընկերոջը՝ Տարիելին: Ռոստեկանը դեմ եր նրա գնալուն, սակայն Ալթանդիլը ծածուկ հեռացավ, Ռոստեկանին թողնելով իր հայտնի կտակը:

«Տո՛ւր իմ դանձը աղքատներին,

Իմ ճորտերին՝ աղատություն»:

Վերադառնալով Տարիելի մոտ, Ալթանդիլը չգտավ նրան այլի մեջ: Նա փնտրեց նրան ու գտավ ուշաթափ վիճակում — մի կողմում սպանված առյուծ եր փռված, մյուս կողմում՝ վազր: Ուշքի գալով, Տարիելը պատմեց իր կռիվի մասին՝ վազրի ու առյուծի հետ և — թե ինչո՞ւ սպանեց նրանց: Ալթանդիլը հանգստացնում և Տարիելին, բերում և նրան այլը և հրաժեշտ տալով նորից և գնում՝ Նեստան-Գարեջանին փնտրելու:

Փրիդոնի հետ նորից տեսվելով և խորհրդակցելով՝ նա կրկին շրջում և ծովափին, վորտեղ Փրիդոնը տեսել և Նեստանին: Շատերին և հանդիպում ու հարցնում, ճանապարհին ծովահեններից աղատում և մի կարավան, միանում նրան և դառնալով կարավանապետ՝ կարավանը տանում և Ծովային թագավորության մայրաքաղաքը: Ալթանդիլն իջնում և մի հարուստ վաճառականի տուն: Վաճառականի կինը, Փաթման-խանում սիրում և Ալթանդիլին և պատմում և, վոր մի քանի տաբի առաջ նրանց

ծովամերձ աչքուն մոտեցավ մի մակույկ, վորի միջից դուրս յեկան յերկուսեամորթ ստրուկ և մի արևադեմ էին: Ինքն ուղարկել և իր ստրուկներին, վորոնց հաջողվել և բերել իր մոտ այդ գեղեցկուհուն: Այդ յերկրի թագավորը, լսելով գեղեցկուհու մասին, տանում և նրան իբ մոտ, բայց աղջիկը կաշառում և պահակներին Ֆաթմանից ստացած թանգարժեք զարդերով ու փախչում: Այդ աղջիկն այժմ գերի չի «քաջքերի» մոտ: Նրան պահում են բերդում իբրև ապագա հարսնացու իբնից անչափահաս թագաժառանգի:

Ավթանդիլը պատմում և Ֆաթմանին իր ով լինելը: Ֆաթմանն իբ կախարհ ստրուկի միջոցով, վոր կարողանում եր թռչել և անտեսանելի մնալ: Նամակ և ուղարկում Նեստանին: Նեստանը պատասխանում և Ֆաթմանին և մի սրտառուչ թուղթ և գրում Տարիելի անունով՝ խնդրելով նրան մոռանալ իբն և վերադառնալ Հնդկաստան, վորը գտնվում և թշվառ վիճակում: Իբ մասին իբրև ապացույց նամակի մեջ դնում և մի կտոր այն շալից, վորը նվիրել եր նրան Տարիելը:

Ավթանդիլն շտապում և Տարիելի մոտ, ճանապարհին հանդիպելով Փրիդոնին և պատմելով նրան վերջին դեպքեր մասին:

5

Ավթանդիլը Տարիելին հանդիպում և դաշտում, սպանված առյուծի կողքին: Երբ Տարիելը բաց և անում նամակը և տեսնում իրեն ծանոթ շալի կտորը, ուշաթափված վայր և ընկնում: Ավթանդիլը, չուր չգտնելով, առյուծի արյունով ուշիկ յե բերում նրան: Նրանք վերցնում են Ամաթին և շտապում Փրիդոնի մոտ, վորը գիտե Քաջքերի (քաջքերի յերկրի) ճանապարհը: Յերեք հերոսները վերցնում են Փրիդոնի յերեք հարուր լավագույն մարտիկներ ու ճանապարհ ընկնում: Կոիվը դժվարին եր, սակայն բերդն ընկնում և, կայադորը վոչնչացվում և Նեստան-Դարեջանն աղատվում և գերությունից:

Ուրախ ու բախտավոր նրանք վերադառնում են Փրիդոնի թագավորությունը և Տարիելի ու Նեստանի հարսանիքն են կատարում:

Ավթանդիլն շտապում և ազատելու Հնդկաստանը, բայց Տարիելը նկատում և նրա վիշտը և պնդում, վոր նախ Արաբիա գնան՝ Թինաթինի և Ավթանդիլի բախտը միացնելու:

Արաբիայում նուշնպես մեծ ցնծություն և... Պոեմի յերեք հերոսները չքնադ գեղեցկությունը հիայնում և ուլուցսով շլացնում հանդիսատեսներին: Յերեքով, Նեստանի և Ամաթի հետ գնում են հեռավոր Հնդկաստան: Ավթանդիլն առաջնորդում և արաբական ութսունհազարանոց բանակը:

Հնդկաստանին մոտենալով, նրանք յեղիպտացի վաճառականներից տեղեկանում են, վոր Փարսագան թագավորը, յերկար տարինեք փնտրելով Նեստան-Դարեջանին և Տարիելին, վերջերս մեռել և վշտից: Նեստանն ու Տարիելը հեկեկում են: Վաճառականները պատմում են նաև, վոր խաթայական թագավորը՝ Ռամադը, Փարսադանի մահվանից ողովելով, զրավել և վողջ Հնդկաստանը, բացի մայրաքաղաքից, վորտեղ փակվել են թագու-

հին և նրա մերձավորները: Հերոսները հաղթում են խաթայեցիներին, գերի վերցնելով Ռամազ թագավորին:

Անդամաճան սիրով կապված յերեք ընկերները վորոշ ժամանակ մնում են իրար հետ, ցնծությամբ անցկացնելով իրենց ժամանակը: Ազատագրված Հնդկաստանը հանում է իր սուզը և տոնում Նեստան-Պարեջանի ու Տաբիեի վերադարձը, նրանց տալով Փարսադանի գահը:

Ավթանդիլին ու Փրիգոնը վերադառնում են իրենց յերկիրը: Ավթանդիլը թագավորում է Արարիայում յերկար տարիներ՝ խաղաղ ու յերջանիկ իր սիրածի՝ Թինաթինի հետ:

Ավթանդիլի, Փրիգոնի և Տարիեի անդամաճան ընկերությունը մինչև վերջին օրերը — իսկական, անշահասեր, անձնուրաց ընկերության օրինակ է:

Այդ անխաղախ ու չքնաղ բարեկամությունն է յերգել Շոթան՝ Ռուսթավ գյուղից, իր հիասքանչ պոեմում վորը կոչվում է «Վեփխիս աղաոսանի» («Վազրի մորթով մարդը» կամ «Վազրենավորը»):

Պոեմը վերջանում է հետևյալ տողերով.

Ամիրանին խոնելին է իր տաղերով գովերգել,
Աբդուլ-Մեսիայի մասին Շավթելին է տաղ հյուսել,
Դիլարգեթին՝ մեծ Թմոզվելին վեհ տողերով անընդել,
Տարիեին՝ Ռուսթավելիս, և արցունքս չի հասել:



ՀԱՏՎԱԾՆԵՐ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՊՈԵՄԻՑ:

1

ԸՆԶԵՆԱՎՈՐԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մեկ անճանանչ ոմքին¹ տեսան
Ջըրի ափին նստած լալիս,
Են աժդահեն թիք եր նընգած
Ինչպես առուծ դնջանալիս:

Բռնած ուներ լոխտով² սև ձի
Նաշխուն լոխտով ոսկեկարած,
Թամքն ու լըկամ³, դոշլուդ⁴, լոխտեն
Մարգըրտներով հյին շարած:

Լալիս եր նա հեկեկալով,
Ծով են բըխում աչքեր նըրա,
Արաղսունքը թոշ⁵ եր դրի
Նուր բացելած վարդու վըրա:

Հագուստու վրա, վերեանցեն,
Ուներ զըցած ընձու մորթին,
Են մորթեմեն գդակ եր ծածկի
Են արմաղան⁶ աղամորդին⁷:

Նրա դամշին⁸ եր կութն ոսկեմեն,
Հաստութենով գուրա⁹ կըռան,
Տեսան թե չե փափագեցան
Ջըլիս¹⁰ մոտիկ տեսնել նըրան:

Անճանանչուն զգիրն եբի¹¹
Թագավորի հրամանքն ենդի¹²,
Անճանանչը փըղձըկալեն¹³
Նուր եկողուն անդաճ չեդի¹⁴:

1 վոմն, 2 ձիու սարք, 3 սանձ, 4 կրծքկալ, 5 դոշ, 6 գեղեցեկ, 7 մարդը (աղամորդի), 8 մարակ, 9 ուժեղ, մեծ, 10 կատարելագետ, 11 բերեց, 12 ասխտեղ, 13 հեկեկանք, 14 չղրեց:

Դլուխը կըռած¹⁵, արտըսունքով
Դիդնու վրա գուր եր արի,
Դառը լացը աչքի լուսը
Եւ չհր թողի դիւի եր առի:

Եկավ մոտիկ նուր եկողը
Նա կի¹⁶ մնաց մնջու հալի,
Են գիշերե¹⁷ լուսերեմեն¹⁸
Կաթկթում եր անձրեւ լալի¹⁹:

Ինչ գըզիւրին ասիւր, արքա,
Նա գլուխ չեղի խոսքուն տերիդ.
Մաիկ տալով չկշտացավ,
Թեպետ սիրտը անուն շերիտ²⁰:

Մե վուտ իժում²¹ առաջ եղի
Ու արդ արավ²², «Ով մարդ դու նադ,
Իմ պարնեմեն²³ հրամանք ունիմ,
Պիտի հիմի նրա մոտ գնաս»:

Ամա նա կա ինչպես մի խուլ,
Շատ լացեմեն դառել ե շաշ²⁴,
Արտըսունքը թաց ե արի
Նրա շուրիւրը, գեդինն ու լաշ²⁵:

Ջըրի դենը, վրաներեմեն
Վեր ե ըլում մի խիստ ծիկա²⁶,
Ամա խեղճը չե ել լըսում
Թե ենդի մարդ կա թե չկա:

Մե նազանի²⁷ ախ ե քաշում,
Սիրտն ե տրիւմ կրակով վառը.
Գըչգըչում ե ինչպես գըբից
Արտըսունքը արենխառը:

Քարգմ. ՍԱՐԳԻՍ

15 Կոր, կապրտած, 16 ստկոյն, 17 աւ ատթե (աչքերի), 18 խողովակներէց, 19 ոռ-
տակ, կտրմիր հակինթ, 20 չովեց, 21 հետո, 22 խնդրեց, զեկուցեց, 23 տերից, թաղա-
վարից, 24 տպուշ, 25 մարմին, 26 գոռաց, 27 դաւրեկան, գեդեցիկ:

«ԸՆՁԵՆԱՎՈՐԸ»

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ԶՈՆ

Նա, վոր ուշօրվ ամենազոր հաստեց յերկնի կամարն անհուն,
Շնչեց վերուստ և տըվից շունչ ամեն ինչի տիեզերքում,
Պարգևիկեց մեզ հողն, ու տեր ենք անեղրության այս բազմազուն,—
Նա չի կարգում լերկրում արքա ի պատկեր յուր և ի հանդույն:

Տերը միակ, վոր կերտեցիր կերպով հաստատ ամեն մարմին,
Տուր գործություն, լեն ոգնական, վոր ապալեմ օտառանալին.
Տուր խենթութուն սիրահարի, հուր սեր անշեջ մինչև շիրիմ,
Տուր թողություն այն աշխարհում անթիվ, անթիվ իմ մեղքերին:

Առյուծին և վայել վահան, նիզակ և սուր. հա՛ն — արքադ,
Թամար — արև՝ արքայուհի, ում այտն և՛ լալ, ում վարսն՝ ագաթ.
Կրճանդգնեմ արդյոք գովել քեզ իմ յերգով, արևի հատ,
Գեղ, ում նայողն, արդարապես, վայելում և շաքար ու կաթ:

Յերգենք Թամար արքայուհուն, լալով արյուն — արցունք առատ,
Նըրան ձոնած յերգըս ընտիր և ինձ թանաք՝ լըճերը սաթ,
Ու գըրիչ ինձ՝ դողդոջնե՛ղեզ. յերգս վորպես սուրսայր մի խալթ,
Թող լըսողի սիրտը մեխվի, ճեղքի, վորպես տեղ մի պողպատ:

Պատվիրեց, վոր գովեմ իբրան յերգով անուշ ու վոլորուն,
Իր հոնքն՝ աղեղ, թերթիչը՝ նետ, սաթ — վարսն ու լալն իր շուրթերում,
Ատամնաշարն իր գեղանի, բյուրեղներից հյուսված սիրուն.
ԶԵ՛ վոր արճիճ զնախին ել մուրճը կարծր քար և փշրում:

Արդ՝ պետք և ինձ յերգիս համար սիրտ, լիզու և արվեստ ճարտար.
Թող ուշօ տա ինձ, նա թող ոգնի, իր ձեռքին և միտք ու հանճար.
Այնժամ կոզնենք Տարիելին՝ Հիշելու լենք լերեք պայծառ
Հսկա — հերոս միմյանց չեղբայր, վորպես գերի իրար խոնարհ...

Ում աչքերը չեն ցամաքում լալով ցավից դառն ու անճար.
 Յեկեք, ում վոր բախտ է ընկել Տարիելի բախտը դժվար.
 Կը նստեմ հեգ Ռուսթավելիս, կերգեմ խոցված յես չարաչար,
 Յեվ ինչ վոր ցարդ զրույց էր պարզ, պիտի դառնա մարգարտի շար:

Թարգմ. Վ. ՏԵՐԵԱՆ



ԳՈՒՍԱՆ¹

Ինչպես վոր ձին կըփորձըվի յերկար ճամփին արագ վազըռում
 Յեւ գնդաձիգն ասպարեզում հաջող դարկով, ուժով բազկում,
 Գուսաններին կը բնորոշե մեծ չափածոն իր հյուսվածքում,
 Հանգի, չափի խաղն ու թերին, թըռիչքն ու ճիգ նրանց խոսքում:

Նա չի գուսան, ով չե տիրում իր արվեստին, լեզվին իսպառ,
 Ում չափածոն հանկարծ կաղաց, պակսեց տեղին բնորոշ բառ...
 Գուսանի խոսքն, ինչպես աղբյուր, պիտի հոսա ջինջ, անբաշտո—
 Նա անվրեպ շարժե չոգանն² ասպարիզում դյուցազնաբար:

Ամեն մի մարդ իրեն մրցող գուսանների հետ չը կարծի.
 Նա չե գուսան, ում բերանից յերկու հատ հանգ հանկարծ թռչի,
 Բայց թե նա իր զծիրքով՝ խրոխտա, իր զուլդ հանդին համառ կառչի,
 Զորուն ե նա մոտ ազելի, իր յերազած նա մարդը չի:

Գուսան ել կա, իրենք փոքրիկ, հասնել ճգնում են մեծերին,
 Բայց սիրտը չեն հերոսացնում, չեն տանում աշխարհը վերին...
 Յերգն ե նըման թույլ աղեղին անփորձ վորսորդ մանկան ձեռին—
 Ոռչոր դաղան չի հաջողվում... և կոտորում ե մանրերին...

Կան գուսաններ արտահայտվող հանդեպներում կամ յերգերում,
 Կատակներում, թեթեվ սիրո կամ նիշելի այլ դեպքերում.
 Նըրանք մեկ մեկ դուր են գալի, թե վոր լինեն պարզ յերկերում,
 Բայց վաճ նրան, ով խըճըճվեց իր խայտոլոր, մութ մտքերում...

Գուսանը թափն իր հանճարի պետք չե ցըրիվ տա կողմնակի,
 Վորջ եյուլթյամբ, անդավաճան պիտի տրվի մի եյակի,
 Նըրա համար միայն ապրի, նըրան գովի, նըշավակի,
 Լեզուն վարժի նըրա համար, նըրան միայն ներդաշնակի:

¹ Գ. Ասատուրի թարգմանության վաղիանները: Պմբ.

² Զոգանը թխակի ձեռով գործիք էր, վոր գործ էյին անում գնդաձիգները—գնդոցըման (գնդախաղի) ժամանակ:

Իմ ընտրածին¹, հայտնում եմ ձեզ, չերկինքն և վեհ սեփականում—
Յես յերկնքի հետ կըմրցեմ— իմ ընտրածով եմ պարծենում.
Անգութ և նա, ինչպես հովադ, բայց կյանքըս սոսկ ե նըրանում.
Նըրան կըզգաք քողավորված այս իմ վեպի մեծ շարանում...

Թուրքմ. Գ. ԱՍԱՏՈՒՐ



¹ Ահաբեկը վերաբերվում է Թամար Թադևոսյան:

ՍԻՐԱՀԱՐՔ

Մերահարը պիտի լինի արեւի պես չքնաղ ու վառ,
Առատածեռն և ունեւոր, ազատ գլուցաղն ու զորավար,
Կռվում՝ հաղթող, լերկարամիտ, մտքով՝ հարուստ, լեզվով՝ ճարտար:
Ում լիովին չի տրված այս — չի կարող լինել սիրահար:

Սերն և դյութիչ և սքանչելի, խորախորհուրդ և և դժվար,
Զրպետք և նույն դասը դընել և՛ ցանկասեր, և՛ սիրահար.
Մար ու ձոր կա յերկուսի մեջ, տարածութեան ու վկայն անծայր:
Կա՛վ լըսեցեք իմ այս խոսքը և մի՛ խառնեք դըրանք իրար...

Մերահարը շքնացող չէ, նա հաստատ և, հավատարիմ,
Ա՛խ և քաշում յարից բաժան և անդադար հիշում չարին.
Թեկուզ լինի խիստ ու դաժան, չարն և տերն իր, ինքը՝ գերին.
Ի՛նչ և զգվանք, զրկանք, համբույր, լերը չկա սեր, սիրտ մտերիմ:

Ով սիրում և այսօր մեկին, վաղն ուզում և սիրել նոր յար,
Ով չի մաշվում յարից բաժան, չասեք նրբան դուք սիրահար.
Ուսկու՞թյուն և, աղայություն, սերը խաղ և նրբա համար,
Իսկը նա յե, ով զսպում և իր յերկրային ըզձերը վառ:

Ճշմարիտ սերն իր վիշտը միշտ թաղում և խոր, պահում թաղուն,
Յարից բաժան՝ հոգով իր հետ, մենությունն և քաղցր իր հոգուն,
Յարից հեռու՝ խիսկորույս մեռնում և նա, վառվում անքուն,
Թեկուզ արքան թափե զալբուլթ, յարի առաջ հեղ ու խոնարհ:

Թարգմ. ՎԱՀԱՆ ՏԵՐՑԱՆ

1 Վերջին յերկու տները հանգուցյալ Տերյանի կողմից վերջնականապես խմբագրված չեն:

«ՎԱԳՐԵՆԱՎՈՐԸ»

Հատվածներ¹

ԱՎԹԱՆԴԻԼՆ ԱՅՅԻ ՅԵ ԳՆՈՒՄ ԹԻՆԱԹԻՆԻՆ

«Այլթանդիլը պալատ մտավ աղատ, հպարտ, համաչելով:
Տեսավ նրան, վորի համար լալիս եր միշտ հառաչելով:
Մռալ նստած եր աննրմանն ու զերթ փալլակ փալլում եր նա:
Ու մթագնել եր լուսնկան մինչև անգամ լուսից նրա:

Մարմինն իր մերկ՝ նա թավ սամուշր առանց աստառ հագած ուներ:
Ու թույլ նետել եր ուսերին, նա թանգագին, նուրբ ըրդեներ².
Սե թարթիչները մարդու սիրտ ելին խոցում, խանդավառում,
Զուգել ելին վիզը ձերմակ մագերը խիտ ու զալարուն:

Նստած եր նա տխուր դեմքով, գցած վրան ըրդեն կարմիր.
Այլթանդիլին խնդրեց նստել ձայնով հանգարտ ու քաղցրալիլ:
Ծառան ծալվող աթոռ բերեց, նստեց նա հեղ պատկառանքով:
Ու դեմ դիմաց նայում եր նա. լցված եր սիրտը հրճվանքով:

Աղջիկն ասաց. «Սիրտ չեմ անում խոսել քեզ հետ այս րոպեյին:
Զգուժե՛մ եյի չասել քեզ այն, ինչ վոր ասել անդոր եյի:
Սակայն գիտես պատճառը դու, ինչու յեմ քեզ կանչել ալտոնդ,
Ինչու յեմ յես մուսլ նստել, տխուր, տրտում ու խեղահեղ»:

Կտրիճն ասաց. «Կարող եմ յես ասել խոսքեր հոխորտալից,
Զե վոր մարում ե հեղ լուսինն արեգակին հանդիպելիս.
Յես անկարող եմ կռահել... գուցե առիթը յես լինեմ.
Խնդրեմ ասե՛ք՝ ի՞նչն ե ձեր ցավն և այն ինչե՛վ յես դարմանեմ»:

Իր ասելիքն աղջիկն ասաց սիրուն, այլ վոչ տեղի, վոճով.
Ասաց. «Թեպետ հեռու և զուսպ ես քեզ պահել մինչև այսօր:
Բայց չեմ կարծում, թե չեն տանջել, քեզ յերբեկ սիրտ խոհեր.
Յես առաջինը քեզ կասեմ հոգուս կսկիծը ծանրաբեռ:

1 Այս և հետևյալ հատվածները Գ. Ասատուրի թարգմանության վարկանիշներից են:
Խճբ.

2 Նուրբ բանվածք:

Հիշում ես դու անցյալ տարի արքայի հետ վորսի գնալիս
Տեսել եյինք մի կտրիճի գետի ափին նստած լալիս:
Այն որվանից նրա մասին եմ մտածում տարվածի պես.
Յերկրն յերկիր նրան փնտրել, նրան գտնել հանձնում եմ քեզ:

Թեպետ ե դու մինչև այսօր խոստովանանք չես արել ինձ.
Քայց վոր սիրում ես ինձ գաղտնի, լսել ե իմ հոգին հեռվից.
Գիտեմ, վոր դու քո աշտերին անդուլ արցունք ես հեղեղել.
Նետահարվել ես դու սիրուց, սիրո ցանցում դերել յեղել:

Ուրեմն դու ինձ պարտավոր ես կրկնակի ծառայելու.
Նախ՝ քեզանից խրդալ չունենք և դու հպատակն ես իմ հլու.
Յերկրորդ՝ սրտիս բնարածն ես դու, ստույգ ե այս, վոչ մտացածին.
Այժմ դնա հեռու թե մոտ ե վորոնիր այն կտրիճին:

Յեվ աչգախոսվ դու սերդ բարկ, ավելի խոր կհաստատես.
Ինձ կազատես նեղությունից, սատանային չեթե հաղթես.
Մրտումս դու ցանիր հուսո մանիշակներ, վարդեր փոխի.
Դարձիր առյուծ, արեվի պես դեմդ կդամ և ինձ տիրի:

Յերեք տարի փնտրիր նրան, քեզ ժամանակ եմ յես տալիս,
Գտնես՝ դարձիր հաղթանակով, համբավ բեր ինձ ավետակի.
Թե չը գտնես, կհավատամ, վոր նա եակ եր անմարմին.
Յեվ յես իբրև վարդի կոկոն կը հանդիպեմ քեզ այն ժամին:

Յերգլում եմ քեզ. սիրտս, չեթե քեզնից բացի այլ մարդ ուղի —
Թեկուդ արեվը մարմնանա, ներկայանա ինձ ամուսին —
Մտնեմ թող մութ սանդարամետ, լինեմ դրախտին վոչ արժանի:
Իմ սերտը թող դանակ խրվի և սերդ թող ինձ սպանի:

Կտրիճն առաց. «Ով արեգակ, վորի դիշերն ե շողափայլ,
Միթե յես քեզ մեղանչական մի պատասխան կարող եմ առլ.
Յես սպասում եյի մանվան, դու կցանք բերիր ինձ վոսկեղուռ:
Իբրև ծառող, պատրաստ եմ արդ յես քո սպասին: Հրամանդ տուրք»

Կրկին խոսեց. «Ով արեգակ, աստված արեվ և քեզ ծնել,
Այդ պատճառով քեզ հնազանդ են յերկնային լուսատուներ:
Շնորհքըդ այդ, վոր ինձ արիր, ինձ համար թանգ ե դերադանց:
Զի թառամի յերեք իմ վարդը քո շողով լուսավորված:

Գտնի վոր անձս յես վաղուց արդեն դրել եմ քո սպասին,
Յես մեկնելու չեմ վազվանից, չեմ ուշանա, կամ սպասի.
Սիրտս կապույտ յերկնաման վարդագուռնեց, դարձավ լալա.
Կլանքիս պարզեվը լավագույն, պատվերը քո յես հանձն առաք:

Իբար կրկին յերգում տվին ու կապեցին սիրո պայման.
Յերկարացրին զրույցն ելի և ավելի մտերմացան:
Ու մոռացան մինչ այդ անցած որերը դառն ու դառնագույն.
Նրանց անբիծ շրթունքներից լույսի ցուլքեր ելին ցուլում:



ԱՎԹԱՆԳԻԼԸ ԳՆՈՒՄ Ե ՎՈՐՈՆԵՆԼՈՒ ՏԱՐԻՆԵՐՆ

Համակարծիք են ինձ Յեղրասն ու Ղրոնոսը իմաստուն՝
Շատ խղճալի յե վարդը այն, վորին յեղյաքն ե ցուրտ նստում,
Ով կորցընում ե լալն այտի ու բարակում վորպես յեղեգ.
Ու թափառում իրրեմ վանդուխտ՝ ձանձրանալով ամենուրեք:

Ավթանդիլի ձին քառատրոփ՝ տափաստանով արագ պաշավ,
Թողեց սահմանն արաբական, ոտարների սահմանն անցավ:
Բայց անջատվելն արեգակից մաշեց իր կյանքը թանգագին,
Տառապանքին վախճան կգար՝ հանդիպելով նըրան կրկին:

Առաջին ձյունը վաղ հասավ, ձյունահար վարդն ե թառամում...
Ուզում ե իր սիրտը խոցել, մերթ դանակի յե նա դիմում...
Ասում ե նա. «Վշտերըս խոր՝ կյանքը շինել ե իննըսուն,
Չկա խրախճան, չանդի, նայի, բարբիտի՝ ձայն ել չեմ լսում...»

Վարդն անջատված իր արեւից հար թառամում եր, թառամում,
Սրտին կրկնում եր. «Իմացիր» — դըրա համար չեի նըվազում.
Նա թափառում եր անծանոթ, ոտար վայրեր և վորոնում.
Հարցուփորձում ճամբորդներին և նըրանց հետ մտերմանում:

Արեւիկերես արեւի պես պտուշտ յեկավ ամբողջ ցամաք՝
Ոտար, անհայտ շատ յերկրներ, ամայացած ու մարդաբնակ:
Նա չըթողեց անտառ ու դաշտ՝ քարափ ու գետ առանց այցի,
Հասավ Հըռոմ, Արեւմուտքից մինչ Արեւելք, Չին ու մաչին:

Փնտրում եր նա, թափում արցունք ու միացնում անափ ծովին:
Իր թե՛ն եր բարձ իրեն համար, գետինը՝ թախտ ու անկողին:
Խոսում եր. «Յար, յես հեռացա, հողիս մընաց քեզ մոտ սակայն,
Պիտի մեռնեմ յես քեզ համար, իմ իղձն ե այս նվիրական:

1 Պարսկական յերաժշտական դորժիքներ են:

Շրջում եր նա՝ վորոնելով ամենուրեք յերկրի-յերկիր:
Յերկնքի տակ վայր չըմնաց, վոր չալցեիր նա ուշագիր:
Յեկ այսպիսով յերեք տարուց յերեք ամիս պակաս՝ անցավ,
Սակայն այն քաջ անծանոթից տեղյակ մի մարդ նա չըտեսավ:

Մի որ մտավ նա մի յերկիր անմարդաբնակ, վայրի, տրտում.
Այլուղ ամիս նա ման յեկավ, չհանդիպեց աղամորդու:
Այսպիսի ցավ չեր հանդիպել վոչ Ռամինին և վոչ Վիսին.
Որ ու գիշեր նա մտորում եր միայն իր յարլի մասին:

Հասավ նա բարձր մի լեռան, ոթեանեց նրա լանջին:
Զեղ յոթն որվա ճամփի չափ լայն մի դաշտ բացվեց իր առաջին:
Յածում հոսում եր գետն արագ, չեր դիմանա նրան կամուրջ.
Ծածկված ելին գետեղերքներն անտառներով սաղարթամուծ:

Լեռան գլխից նա հիանում եր՝ իր որերը հաշվելով.
Յերկու ամիս եր մընացել—նա հառաչում եր հոգեխռով.
«Ավանդ—ասում եր,—կբացվի ձախորդությունս վողբական.
Ել վարկըս չի վերականգնի—և չեմ ծնվի յերկրորդ անգամ»:

Յեկ նա տարվեց մտածմունքով, թե արդյոք վնի միջոցն ընտրի.
«Թե ձեռնունայն վերադառնամ, ինչեւ կորա այսքան տարի:
Ի՞նչ զեկուցեմ իմ արեւին, ինչեւ այսքան թափառեցի,
Յերբ սնուն անդամ յես չիմացա նրա մասին, ում փնտրեցի:

Իսկ յեթե յես չեմ չդառնամ, ուրիշ որեր կանցնեն այսպես
Յեկ լուր չառնեմ նրան մասին, վորին այսքան փնտրել եմ յես,
Շերմաղինին տրված ժամկետն ել կհասնի. կսկսի լալ,
Դուժեկ վախճանըս արքային, և նա կաբող և հավատալ:

Կազդարարի իմ մահն այնտեղ, ինչպես վոր յես եմ պատվիրել,
Յեկ կսկսեն այնտեղ սգալ ու անց կացնել վշտոտ որեր,
Իսկ յես յերկար ման գալուց յետ՝ վերադառնում եմ կենդանի»:
Այսպես վողբում եր ինքն իրեն սրտով թախծոտ և անձկալի:

Խոսում եր. «Տեր, ինձ համար Եր չարիք արդար մի դատաստան.
Ինչեւ ունայն անցկացրիր չերեք տարիս թափառական,
Դու վշրեցիք սրտիս բերկբանքն ու վշտերով լցրիր հոգիս,
Չեն չորանում գիշեր-ցերեկ աչքերս դառն արտասուքից»:

Նա համոզում եր ինքն իրեն, վոր համբերի Խոսում եր նա.
«Չեմ մեռնի, վնչ, յես որ առաջ. և չե տրտում հոգիս հիմա:

Առանց տիրոջ՝ յես անկարող եմ ինձ ողնել. զուր եմ լալիս:
Բախտի վճիռը չի փոխվի, չի կատարվի անկարելին:

Ամեն մի վայր յերկնքի տակ յես անցկացա ուշիմ ու լուռ,
Բայց վոչ մի տեղ չը լսեցի աչն կտրիճի մասին մի լուռ:
Իրավ ելին նըրանք, վորոնք նրան կարծում են սատանա:
Լացն ինչ ոգուտ պիտի բերի, զուր եմ լալիս յես անխնա»:

Յեւ Ավթանդիւն իջավ սարից, անցավ անտառը խավարոչին:
Յեղեգնուտից արդեն հոգնած տափաստանով սուրում եր ձին.
Կորովն և ուժը կռների դավաճանել են սկսում.
Կարոտ եր նա բյուրեղ դաշտի կայաններին արեւագուն:

Նա վորոչեց փերադառնալ: Ու հառաչեց, ապա լացեց:
Շարունակեց դաշտով սուրալ, աչքով հեռու ճամփան չափեց:
Ամբողջ ասիս նա վոչ մի տեղ չեր տեսել մարդ մի շնչավոր:
Լոկ դադաններ դարհուրելի, բայց չեր լարել աղեղը գոռ:

Յեւ Ավթանդիւր վայրատեա՝ թեպետ արցունք եր լոկ հորդում,
Բայց և աշնպես ուղեց ուտել—հատուկ ե այդ աղամորդուն:
Ու Ռոստոմյան հուժկու թեփով իր նա գազան նետահարեց,
Շամբուտի մոտ իջավ ձիուց ու կայծհանով կրակ վառեց:

Ձին բաց թողեց արածելու, մինչեւ վոր միսը խորովվեր,
Տեսավ իր կողմն են արշավում յերեք անհայտ ձիավորներ:
Ասաց. «Սըրանք լավ մարդիկ չեն, ավազակներ են ինձ թվում:
Հողեղեն մարդ, վորքան գլխում, աչս կողմ յերեք չի հայտնըվում»:

Այսպես անդեն անպետք եմ յես. կարող են ինձ կարծել վախկոտ»:
Հազավ զրբան, զենքերն առավ, հեծավ նըժուլոյն իրա ցասկոտ:
Ջեռքին պատրաստ ուներ աղեղ, մեջքին կապած եր թուրն անեղ,
Ով նրա հետ կռվել ուզեր, կուզեր նա մահն իր խելահեղ:

Ու վերցրած աղեղ ու նետ, նա դեմ գնաց առանց ահի:
Յերկու հողի միրուքավոր բերում ելին մի պատանի:
Վերավորված եր նա գլխից ու թուլացած, արյունաքամ:
Լալիս եր նա և տառապում ու հազիվ հաղ շնչում անդամ:

Կանչեց. «Ուլքեր եք, չիղբալրներ, յես կարծեցի ձեզ ավազակ:
Յեւ նա լաց. «Հանգստացիր, յեղիք մի կերպ մեղ ոժանդակ.
Թե չես ողնի, մեղ ձախակցիր, վշտին նոր վիշտ բազմապատկիր»:
Վողբա մեր վողբը դառնաղին, մեղ հետ սգա և արտասվիր»:

Յեւ Ալթանդիւն ալդ սղաւոր մարդկանց մոտիկ հարցեր տվեց,
Յեւ հեկեկանքն ընդհատելով պատմում էյին դառնահեծեծ:
«Մենք յեղապրներ ենք լերեքով: Դրա համար ենք արդ սըգում:
Ունենք ամուր բերդաքաղաք Խատալեթի շրջակայքում:

Լսել էյինք, կան շատ վորսեր այս կողմերում: Վորսի յեկանք:
Մեզ հետ մեր զորքն եր անհամար: Գետի ափին մենք մոտեցանք:
Մեզ վորսավայրը դուր յեկավ: ամբողջ ամիս այստեղ էյինք:
Դաշտում, սարում ու կիրճերում անթիվ գաղան կոտորեցինք:

Մենք, այս լերեք յեղապրներով, լավ նետողներ հանդիսացանք,
Մեզ ուղեկցող նետողներից ամեն մեկից ել գերազանց:
Ու պարծեցանք իրար առաջ՝ նետելու մեջ և վիճեցինք,
Սակալն իրար համողած մենք իրարից զգոհեցինք:

Մենք զորքն այսոք հետ դարձրինք պախրաների մորթով բարձած,
Ասում էլինք. յերեկացեանք, թե մեզնից ով ե գերազանց:
Մենք կը մնանք ինքնազուլու, կանգնենք ամեն մեկն առանձին
Նետենք միայն մեր տեսածին, վոչ ուրիշի նըկատածին:

Յերեք հողով մենք մնացինք վոտից գլուխ սպառազեն:
Զորքին մեկնել հրամայեցինք, վոր անտեղի չկասկածեն:
Վորսում էյինք ամբողջ գաշտում, անտառներում և ձորերում,
Մեր վերելում թեւով հալքերն ու գաղանները կոտորում:

Հանկարծ կտրիճ մի լերեկաց մուսլլ, տիսուր, ամբարտավան,
Հեծած ահեղ նժուլզը սեւ, վոր հրեղին եր, անմահ:
Նա վազբենի ուներ հաղած մարմնի վրա և իր գլխին:
Նրա նման չքնաղ եյակ չե հանդիպել դեռ վոչ վորին:

Նայում էյինք՝ նրա վալլից ասես աչքներս շըլացած:
Կարծում էյինք արեւի և նա, վոր յերկնքից իջել և ցած:
Մենք ուղեցինք նրան բռնել ու համարձակ գլխիցինք մոտ:
Ալդ ե պատճառը, վոր թափում ենք արտասուք՝ ալքան վշտոտ:

Վարպես ավագ՝ կրտսեր յեղրուր խնդրեցի՝ նրան գերի.
Ինձ հետովող միջնեկը շատ գովեց նժուլզը հեծվորի.
Առաջարկեց, վոր հարձակվենք նրա վրա մենք միասին:
Հարձակվեցինք: Գընում եր նա հանգիստ, չքնաղ, ինչպես լուսին:

Ու դալկահար վարզը հանկարծ շառաղուհեց բյուրեղ լալից.
Մեր դեմ ահեղ ցասման փոխեց իր յերազները քնքշալից:

Մեզ վոչ գերեց, վոչ աղատեց, մեզ մարդատեղ ել չը դրեց:
Միայն իր դեմ խակ գործողին իր մտրակով հասունացրեց:

Առաջընթաց եր մեր կրտսերն, իսկ ավագներս՝ իր յետով:
«Կանգնիր» — ասել համարձակվեց, ձեռքով միայն հպավ թեթեւ:
Իսկ նա թրին ձեռք չը տվեց — ու կանգ առանք մենք պատկառուն:
Միայն դարկեց նա մտրակով. հոսեց գլխից առատ արյուն:

Յեղբայրը մեր վիրավորված, իսկույն ձիուց վալը տապալվեց,
Մենք քաջացած, սարսափահար, իսկ նա բընավ չաճապարեց:
Բան չասացինք ել մենք նրան, ով մեզ խոցեց դառնախոռով —
Յեթե առանց թրի հաղթեց, մաս մաս կտներ նա մեզ թրով:

Իր մտրակի մեկ հարվածով գլուխն այնպես նա պատառեց,
Վոր տրորեց վորպես փոշի, վորպես անհույս դիակ փոց,
Իր դեմ անմիտ խիզախողին նրվաստացրեց հողի նման:
Յեով նա սուրում եր մեր առաջ մռայլ, հանդուգն, ամբարտավան:

Ել չը դարձավ. գընաց հանգիստ իր նժույգի հետ միասին...
Նայիր, ահա գնում ե նա ինչպես արեւ, ինչպես լուսին:
Յեով լացողները ցույց տվին նրան մի կետ հեռանշմար.
'Իեռ յերեկում եր սեւ նժույգը՝ սեւ մեջքին արեւմ առմար:

Ձյունեւ ալտերն արտասուքով՝ Ավթանդիլին ել հարկ չկար,
Վորովհետեւ իզուր չանցան թափառումներն իրա յերկար:
Մարդն յերբ հասնում ե փափագին, գտնում փնտրածը բաղձալի,
Կարիք չունի ալեւ հիշել նեղություններն իր անցյալի:

Ասաց նրանց. «Իմ յեղբայրներ, պանդուխտ եմ չես աստանդական»:
Այդ կտրիճին վորոնեւու հայրենիքից այստեղ ընկա:
Հիմա արդեն ձեր շնորհիվ հասա չես իմ նպատակին:
Աստված հեռու պահե վշտից և հասցնի ձեզ՝ փափագին:

Ինչպես վոր չես փափագս առա, իմ վորոնածն արդեն դրտա.
Այնպես և ձեր յեղբոր ցավին, հիւանդության թող վերջը դառ:
Նրանց համար տեղ ցույց տալով ասաց. «Ըզդնայ ալն կողմ տարեք»:
Այն զով տեղում, այն ստվերում նրան մի քիչ հանդիստ տըվեք»:

Այսպես խոսեց և իր նժույգն ասպանդակեց ասպառզեն,
Սուրաց նըժույգն ու սլացավ, ինչպես թոկից փախած բազեն:
Յեով կամ լուսինը, վոր վաղում ե լույս հետքովն արեգակի:
Հետդհետե հով եր գալիս նրա սրտի վառ կըրակին:

Հասնում եր նա և մտածում՝ ինչպես նրան նա մերձեցնաւ:
Անդգուշ խոսք ու զրույցից խենթն ավելի կը խենթանա:
Պիտի խելքը միշտ փնտրե անհընարի համար հընար:
Ու սառնասիրտ պիտի լինի, խելագարից չվախենա:

Նա խելագար ե քանի վոր և դադադած՝ ու վայրենի,
Վոր վոչ վոքի մտա չի թողնում, վոր նրան խոսք հասկացնի,
Թե հանդիպենք յերես-յերես, իրար դարկել մենք կսկսենք:
Կամ նա պիտի ինձ սպանի, կամ յես նրան, լեւ զուր կորչենք:

Այն կտրիճին հարվածելու համար յես թուրքս չեմ քաշի:
Վոչ կապանվեմ, վոչ կապանեմ, չեմ ել ֆլաստի, կամ ֆլաստի,
• Կհետեմ նրան հեռվից առանց աչքից բաց թողնելու:
Յեւ զնացին, անցան դաշտեր, շամբեր, ձորեր, հեռու, հեռու...

Դե՛ք Ավթանդիլն այս եր ասում. «Վաստակս ինչո՞ւ անցնի ուռաջն»:
Ձկա եակ մի ախպիսի, վոր իր համար բռն չունենա:
Ուր ել գնա, յես կհասնեմ, ամեն պարիսպ կարհամարհեմ,
Մինչեւ վերջին ուժերս յես նրան այսպես կհետեմ»:

Յերկու գիշեր, յերկու ցերեկ հետեմեցին այդպես իրար,
Չառած՝ բերան հաց, կերակուր, չառած վոչ քուն և վոչ դադաք:
Գիշեր-ցերեկ միշտ հոգնատանջ մի պահ անգամ չկանգնեցին:
Յեւ արցունքներն այն յերկուսի դաշտերն ամեն վռոգեցին:

Այսպես մի որ, յերեկոյան, յերեւոյցին հսկա ժառեր
Ժայռերի տակ հոսում եր գետ ու յերեւում եյին ալրեր:
Գետի ափին, պարզ չեր, չեղե՞ք, թե այլ բույսեր եյին բուսնում:
Բարձրակատար ծառերն այնտեղ ժայռի գագաթն եյին հասնում:

Կտրիճն անցավ գետն ու ծառուտն, ուղեվորվեց դեպի այրեր:
Իսկ Ավթանդիլն իջավ ձիուց ու վորոնեց բարձր ծառեր:
Ձին ծառի տակ կապեց ու ծառն յելավ՝ աչքով վորոնելով:
Տեսավ ինչպես կտրիճը այն գնում եր՝ դառն արտասովորով:

Յերբ ծառատանն անց կացավ լացող կտրիճը վագրենաւոր,
Այրի մուտքին զիմաւորեց նրան մի կին սև ջուրավոր,
Վոր սկսեց լալ բարձրաձայն, ծովի նման արցունք թափեց:
Կտրիճը վար իջավ ձիուց, կնոջ վըզով փաթաթվեց:

Կնոջ մազերը թավ, խրոխլ նա խրտուցրեց իր թավուտով,
Իրար զրկած կանոնած եյին կտրիճը ու կինն այն հոգեթով:

Վողրում եյին բարձր ձայնով, թնդում եր լեռն արձագանքից։
Իսկ Ավթանդիլն ապշել եր այդ աղմուկներից և այդ կյանքից։

Կինն իր վշտին դադար տվեց, մի պահ նրանք հանդարտվեցին.
Յինը ձիու սարքը հանեց և աչրի ներսը տարավ ձին։
Ու գենք-գրահը կտրիճի հանեց նա լուռ ու սղավոր
Ու ներս մտան և դուրս չեկավ այրի խորքից վոչ վոք այդ որ։

Յեվ մտածում եր Ավթանդիլն. ինչպես հասնի այդ գաղտնիքին։
Յերը լուսացավ, սեվ շորերով կինը յեղավ աչրից կրկին.
Սև ձին սանձեց և իր քողով յերկար սրբեց, սարքը դրեց,
Ապա կրկին գենքն ու դրահը անխոս ու հեղ նա դուրս բերեց։

Սովորությունն եր կտրիճի՝ տանը յերկար նա չ'ը նստում։
Կինն ել լալիս, կուրծքը ծեծում, վարսերի խուճը պոկոտում։
Նորից իրար վզով բնկան։ Նա համբուրեց, հեծավ իր ձին,
Յեվ տխուր կինն ել՝ ավելի տխրեց։ Նորից բաժանվեցին։

Յեվ Ավթանդիլն արգեն տեսավ արեգնային գեմքը նրա.
Մորուք չուներ, ընչացքը վեր եր վոլորել։ Արեվ եր նա։
Քամին բերեց հալվելի բույր, այդ նրա բույրն եր խնկածին։
Այնպես կընկճեր նա առյուծին, ինչպես հուժկու առյուծն՝ ալճին։

Գրնաց նորից նա այն ճամփով, վորտեղ յերեկ հենց հանդիպեց։
Անցավ շամբուտն ու հեռացավ, ապա դաշտի կողմը դիմեց։
Ավթանդիլը թագուն նաչում եր մի ծառի յետևի անցած.
Առում եր նա. «Զարմանալի հաջող տարավ այս գործն աստված։

Սրանից ել հարմար առիթ չեյի ցանկա յես տիրոջից.
Յես այս կնոջը կստիպեմ, վոր ինձ լուրեր տա այս քաջից.
Իմ սիրտն ու վիշտն ել իսկական՝ նրա առջև յես կբանամ.
Յես վոչ նրան հարված կաամ, վոչ նրանից յես կստանամ»։

Իջավ ծառից և արձակեց նժուգն իր ձեռով կապած.
Հեծավ, աշտեղ ուղեվորվեց տեսավ այրի զոները բաց.
Կինը կրկին այրից յեղավ հուղված սրտով, արտասովթոր,
Դարձում եր, թե վերադարձավ վարդերեսն իր վագրենավոր։

Չճանաչեց. սա իր տեսքով չեր նմանում նրա քաջին։
Յետ փախավ կինը ճշալով, ժայռերն ահեղ դողդողացին։
Սա հարձակվեց, բռնեց կնոջն ինչպես թակարդը կաքավին։
Լալիս եր կինը միալար, գիմում ժայռին ու անտառին։

Կիրնն անձնատուր չեղավ նրան. նա յենն իսկ պիղծ եր համարում.
Ու թարտում ինչպես կարգին արծվի հողը մաղիլներում,
Ու գնուլթյան եր կանչում ինչ վոր Տարիելի, վոր չեր գալիս,
Ավթանդիլի առջեւ չոքած նա աղերսում եր ու լալիս:

Իսկ սա տառն էր. «Մի վախիր, չես մարդ եմ, յես աղամորդի.
Փունջը տեսա մանուշակի և դալկահար չքնաղ վարդի,
Պատմիր, թե մի և նա՝ դեմքով պայծառ արևով, կաղմով նոճի:
Խնդրում եմ քեզ, հանգստացիր, յես ուրիշ բան չեմ պահանջի»:

Յեւ կիրնն ասաց արտասովելով. «Քո հայցն և սուր դատավճիռ.
Խեղքի արել, յեթե դու խենթ ես, յեթե վոչ,— ինձ արձակիր:
Պահանջդ շատ և դժվարին. ալդ հեշտությամբ յես չեմ պատմի:
Դու չես տիրի ալդ դադոնիքին. դուր ժամանակդ մի վատնիր»:

Շարունակեց. «Յերիտասարդ, իզուր ես դու խնդրում այդքան,
Այդ չի կարող դրի առնել ամենավարժ գրիչն անգամ.
Դու մի անգամ կասես. «պատմիր», յես քեզ կասեմ «վոչ» անհամար:
Ինչպես ծիծաղն և լացից լավ, սուգն և յերգից լավ ինձ համար»:

Կտրիճն ասաց. «Թափում եմ յես արյուն արցունք, ահա նաչիր.
Յես ուշացել եմ, նեղն ընկել. յես խղճալի յեմ, խնայիր:
Ինձ մի սպանիր, պանդուխտ եմ յես, խղճա, պանդուխտ ես դու
նույնպես:

Քո պատմությամբ դու կը մարես իմ սրտի բոցը դառնակեզ:

Կիրն, չգիտես, ինչ նեղությունն ու ճանապարհ եմ յես անցել,
Ինչքան ծարավ եմ այն լուրին, վոր լսել չեմ կարողացել:
Յես քեզ գտա. վորքան ել դու վերավորվես իմ խոսքերից,
Յես, մեկ եղ քեզ չեմ արձակի. պատմիր և մի քաշվիր ինձնից»:

Պատասխանեց. «Յես մի, դու՛ ով—մեր հանդիպումն անմիտ է, գուր.
Պատժվեցիր պիտի, յեղչամ, թե մոտ լիներ արեւիս հուր.
Չեմ ցանկանում յերկար խոսել, յես քեզ պիտի հակիրճ ասեմ.
Վարվիր այնպես, ինչպես կուզես, յես քեզ վաչինչ պատմելու չեմ»:

Կրկին խնդրեց յերդումներով, կնոջ տառն նա ծունկ չոքեց,
Սակայն նրան չհամողեց, աղերսելուց արդեն հոգնեց:
Նրա դեմքին դայրուլթ պալթեց, լարեց աչքերն արնակալած,
Ծամբ բռնեց ու քաշ տվեց, բկին դրեց դանակը բաց:

Ասավ. «Քանի վոր ինձ այսքան վրդովեցիր, քեզ չեմ ների.
Յեւ միթե դու պիտի ստիպես, վոր յես թափեմ արցունք աղի.

Վոր քեզ կրկին չը հարչարեմ, լավ ե՛ պատմիր դու մի անգամ,
Թե չե, աստված տա թշնամուս այն մահը, վոր յես քեզ կտամք:

Կինը. «Դու շատ անաջող ձեով ես ընտրել՝ ուժ գործադրելու.
Թե չը մորթես, յես չեմ մեռնի, ուրեմն վողջ եմ մնալու.
Յեով ել լինու համար պատմեմ, կյանքս մահվան վտանգ հունի.
Յեթե մորթես, յես կմեռնեմ—պատմող գլուխն ել չի լինիք:

Կրկին ասաց. «Ինչո՞ւ յեկար, ինչ ես հարցնում թե ով եմ յես.
Քանի յես վողջ եմ, կենդանի, չեմ պատմելու այդ բանը քեզ:
Յես ավելի լավ կսեպեմ գլուխս տալ սպանելու,
Ինչպես անպետք թղթի կտոր, շատ հեշտությամբ պատառելու:

Չկարծես թե ինձ սպանել—դա ինձ պատիժ ե լինելու.
Դու գրանով կը հորացնես արցունքիս գեան, ել չեմ լալու.
Մի ծղոտից ավելի ցած եմ կյանքս յես գնահատում.
Ինչպես խոսեմ քեզ հետ անկեղծ—յերբ չըլտեմ թե ով ես դուք:

Սա մտածեց. «Այս կնոջ հետ չի հաջողվում այսպես խոսել.
Պետք ե ուրիշ, գործադրելու, ավելի լավ հնար գտնել:
Թողեց նրան, նստեց մենակ և արտասուք թափեց առատ,
Ասաց. «Իդուր քեզ նեղացրի, յեով յես հիմա զղջում եմ շատ»:

Կինն եր նստած խոով, մռայլ, նա տակավին չեր մեղմանում.
Ավթանդիլը լալիս եր դեռ, վոչ մի խոսք չեր արտասանում.
Արտասուքի մի ավազան վարդաստանում եր կազմվել...
Հիմա արդեն կինը լացեց. Ավթանդիլից եր ազդվել:

Արտասվում եր նա ջերմաջերմ, վորովհետև խղճաց նրան.
Նստած եյին իրար ոտար ու բաց չեյին անում բերան.
Կտրիճն զգաց՝ կնոջ զայրույթն արդեն իջել և իրեն դեմ,
Ադիրսալի արտասվելով կնոջ առջ չոքեց արդեն:

Ասաց. «Գիտեմ, յես իրավունք հունեմ վրադ վստահելու.
Քեզ բարկացրի և այժմ կամ վորբի նման պանդուխտ ու լուռ:
Վստահո թյունդ գրավելու համար յես քեզ եմ նվիրվում.
Յոթը ճամբին խոստովանած մեղքն ե միայն մարդուն ներվում:

Թեպետ և քեզ յես իմ մասին շատ վատ կարծիք կազմել տվի,
Բայց սիրողին պետք ե խղճալ—այս պետք ե շատ լավ իմացվի:
Ամեն կողմից անլուր եմ յես, քեզնով պետք ե ուժ ստանամ.
Ավելին ինչ կարող եմ տալ—սրտիդ համար հոգիս կտամ»:

Յերբ կինը՝ հեգ այն կտրիճից լսեց խոսքեր սիրո մասին.
Արցունք թափեց մորմոքվելով. Ավթանդիլի հետ միասին.
Բարձր ձայնով, դառնահառաչ սկսեց լալ. չծիծաղեց:
Ավթանդիլի սիրտը ցնծաց, աստված փափազը կատարեց:

Ու մտածեց. «Իմ խոսքերից սրա յերեսն ե դժգուհում:
Յերեկի սա մեկի համար խելակորույս լաց ե լինում:
Ասաց. «Իմ քույր, սիրահարին թշնամիներն ել են խղճում:
Սիրողըն ինքն ե մահ փնտրում, մահից յերեքը նա չի փախչում:

Յեռ ել մի խենթ սիրահար եմ, յես հազիվհազ եմ կենդանի.
Իմ արեգակն ինձ ուղարկեց գտնեմ նրան ուր ել լինի:
Շատ վաչք, վորին ամալ չի հասել, յեղել եմ այդ վայրի վրա:
Յեվ ձեք սիրտը արդեն գտա—նույն ե՝ քո սիրտը թե նրա:

Նրա յերեսն իմ սրտի մեջ վորպես պատկեր յես գծեցի.
Նրա համար խելակորույս խրախճանքներս կարճեցի.
Յերկու խելքից դու մեկն ընտրիր—փրկիր ինձ կամ գերի դարձրու.
Կամ ապրեցրո՛ւ, կամ մահացրո՛ւ—իմ ցավին ցավ ավելացրո՛ւ:

Կինն այս անգամ Ավթանդիլին պատասխանեց շատ հաճելի.
«Այդ ձեվը, վոր դու ընտրեցիր, ինձ ավելի յե դուր գալիս:
Փոքր ինչ առաջ թշնամություն սերմանեցիր դու իմ հոգում,
Այժմ գտար քեզ սրտակից, քո քրոջից ավելի՝ քույր:

Յեվ քանի վոր դու դիմեցիր իբրեւ զենքի՝ սիրո խոսքին,
Վճռում եմ յես այսորվանից պիտի դառնամ յես քո գերին.
Քեզ նվիրում եմ իմ սիրտը յես, չվշտացնեմ, կվոգեվորեմ,
Քեզ ծառայեմ ե քեզ համար իմ կյանքն անգամ զոհաբերեմ:

Այժմ ինչ վոր յես քեզ ասեմ, յեթե լսես հոժարակամ,
Նպատակից ել չես շեղվի. կհաջողվի քեզ այս անգամ.
Թե չես լսի, դու չես գտնի փնտրածը քո, ինչքան ել լաս,
Դու կմեռնես կյանքից դժգուհ ե անպատիվ կը հեռանաս:



ԱՎԹԱՆԴԻԼԻ ԱՏԱԿԸ

Յե՛կ նա նստեց թագավորին հուզիչ նամակ մի գրելու...

«Ո՛վ թագավոր, թողնում եմ քեզ, ինձ մի ջանար դու փրկաւրելու...

Յեա չեմ կարող աջատեղ մնալ սրտիս կրակն ել վառելու...

Ներքի դու ինձ, տա՛ւր ուղեկից վողորմությունդ ինձ կրելու:

Ձի ոգնելու քեզ սփոփանք, զուր ե նույնպես արցունք թափել:

Կկատարվի յերկնի վճիռն, հնար չկա բախտին խաբել:

Բայց մեր պապերն են կըտակել մեզ, չընկրճվել, ցավը գսպել —

Մեկ ե՛մ մարդուն չի վիճակված ճակատագրիցն իր խուսափել:

Վոչ նեղ, և վոչ ժայռոտ ուղին մահաըշափին կխանդարի:

Դաժան մահվան են յենթակա ամեն վախկոտ և քաջարի:

Հաղն ե հետո հյուրընկալողն ամեն հզոր և անկարի,

Անփառունակ կյանքից սակայն փառքով մեռնելն ե ցանկալի:

Բախար յեթե ինձ խորտակեց, այդ խորտակիչն ամեն կյանքի,

Յե՛կ յես մեռնեմ ինչպես պանդուխտ՝ կարոտ մոր լաց — հեծե՛ծանքի:

Յե՛կ վա՛յ ընկեր, վա՛յ մբտերիմ՝ Հարժանացնե ինձ պատանքի,

Թող չը թողնե ինձ այդ ժամին քո սիրտն առանց կարեկցանքի:

Ունեմ ճորտեր և գանձ անթիվ — դա լավ հայտնի յե լուրերն,

Տա՛ւր ճորտերիս ազատությունս, գանձըս՝ աղքատ — չունեմ զորին,

Յե՛կ լիացրա՛ւ դու ամենքին՝ վորքին և հեզ չըքավորին,

Կըսկըծալով հիշեն թող ինձ՝ փուչ աշխարհով անցավորին...

Ինձ հարկ չկա իմ գանձերից քո գանձերին մաս կըցելու,

Բայ վորբանոց, անկեխանոց, կամուրջ, ուղի տա՛ւր զցելու:

Մի խընալիք իմ ունեցածն ինձ հիշատակ գործածելու:

Բացի քեզնից վոչ վոք չունեմ իմ կըրակին ջուր ածելու:

Իմ թագավոր, ալարտեցի յես իմ ձեռքով գրած կըտակ,

Յե՛կ քեզ ահա պիտի թողնեմ սրտով հուզված, մըրըրկատակ:

Մի վշտանար, իմ սնուցող, մի մշուշիւր ճակատդ խտակ —

Շատ թշնամու պիտի հոկես և խընամես շատ հըպատակ:

ԱՎԹԱՆԴԻԼԻ ԳԵՐԿՐՈՐԴ ԷԱՆԳԵԼՈՒՄԸ ՏԱՐԻԵԼԻՆ

Այս խոսքերով, լաց լինելով, գնում եր նա տխուր, գունատ,
Բարձրացավ մի լեռան գագաթ, տեսավ մի դաշտ ստվերառատ.
Շամբուտի մեջ տեսավ սելին, կանգնած եր նա սանձն արձակած,
Յեվ մտածեց. «Տարիելը այստեղ կլինի, չկա կասկած»:

Տեսնելուն պես սիրտը նրա արագ խփեց, դարձավ պայծառ,
Վշտահարի խիռըը դարձավ, վոչ թե տասը, դարձավ հազար,
Փայլ ստացավ վարդը կրկին, բյուրեղացավ գուշնը սաթի,
Փոթորկի պես նա ցած վազեց, չհամբերեց, վոր լավ դիտի:

Յերբ մոտեցավ Տարիելին, նա անսահման տիրեց հանկարծ:
Արցունքես եր Տարիելն ու մերձիման այնտեղ ընկած:
Նրա ոձիքը պատառոտած, մաղերն ամբողջ փետած փռել.
Ձեր հասկանում ել վոչ մի բան, վոտքը կյանքից ղենն եր դրել:

Իր մի կողքին մեռած առյուծ, և թուրն ընկած արջուհուտած,
Մլուս կողքին անշունչ մի վագր սատկած, գետնին եր տապալված:
Նրա աչքից աղբյուրի պես աբտառուքն եր առատ հոսում,
Բայց հրդեհվում եր սիրտն տսես ու բորբոքվում նրա ներսում:

Սարսափահար աչքերը բաց, գիտակցություն չկար վրան,
Տառապանքից արդեն հեռու, մոտեցել եր մահվան դռան:
Ավթանդիլը բարձր կանչում, ձայն եր տալիս, վոր ուշքի գա,
Նա չեր լսում: Վազեց մոտիկ՝ յեղբայրությունը իր ցուլց տա:

Ձևքով աչքից արցունք քամում և այտերն եր սրբում թևով,
Նստել եր մոտ՝ ականջի մեջ նրա անունը կանչելով.
Գոռում եր նա. «Ձես ճանաչում, Ավթանդիլն եմ քեզ մոտ յեկած»,
Բայց նա չմեկ ու չեր լսում, աչքերը մի կետի հառած:

Այսպես չեղավ բոլորն ահա ինչպես հիմա պատմեցի յես,
Բամեց արցունքը աչքերի, փոքր ինչ նրան ուշքի բերեց:
Նա ճանաչեց և համբուրեց, յեղբոր նման գրկեց նրան,
Վկա յե տերը կենդանի՝ մարդ չի ծնվել նրանց նման:

Ասաց, «Յեղերայր, չթողեցի խոստում—յերդումն յեռ անկատար,
Յերդումս յեռ հաստատեցի—հոգիս բերանս ինձ տեսար:
Այժմ թող ինձ չեռ մինչև մահ, լամ, գլխիս տամ արտասովալից,
Բայց ինձ թաղիր, խնդրում եմ քեզ, գազանի կեր մի անի ինձ»:

Կտրիճն ասաց. «Ի՞նչ եռ խոսում, ինչո՞ւ յեռ քեզ չարքիբ դործում,
Ո՞վ չի յեղել սիրահարված, ո՞վ չի ալրվել սիրո բողբում.
Ո՞վ ե մարդկանց ամբողջ ցեղից ալրվիսի բան արել քեզ պես,
Ի՞նչ եռ տարվել սատանայով ու կամովին սպանում քեզ:

Թե գիտուն ես՝ գիտունները միարեբան այս եռ ասում—
«Արին պիտի լինի արի, կարողանա լացը զսպել,
Վշտերի դեմ ամուր մնա, լինի կարծր ժայռի նման.
Մարդը վշտին տրվում ե լուկ գիտակցությամբ իր սեփական»:

Գիտուն եռ դու, բայց գիտունի խոսքով վարվե՛ դու չգիտես.
Գազանները միշտ, լացով, քո իղձն ի՞նչպես կկատարես.
Ում համար վոր մահանում ես, դու չեռ գտնի կլանքն ատելով,
Ի՞նչու յեռ վողջ գլուխդ կապում՝ վերքիդ նոր վերք հասցնելով:

Ո՞վ չի յեղել սիրահարված, ո՞վ չի ալրվել սիրո հնոցում.
Ո՞վ չի կրել նեղութուններ, ո՞վ ում համար ուշք չի կորցնում.
Ի՞նչ պատահեց անբնական, ինչո՞ւ յեռ դու հոգիդ մաշում,
Չգիտե՞ս դու, վոր առանց փուռ և վռ մի մարդ վարդ չի քաղում:

Վարդին հարցրին. «Այդքան չքնաղ կաղմ ու դեմքով քեզ ո՞վ կերտեց.
Ինչո՞ւ յեռ դու փշոտ, ինչո՞ւ ցավով եռ միշտ ձեռք բերում քեզ»:
Ասաց. «Գաղցրին դառնով հասիր, լավն այն է, ինչ գտնես դժվար,
Սիրունը թե ետան դարձավ, մի հատ չիրի արժեք մի տար»:

Յեթե վարդն ե այսպես ասում, բույսն այդ անշունչ, փոքրահասակ,
Ո՞վ կհնձի ուրախություն առանց ցավի ու անվաստակ
Ո՞վ ստացավ առանց փորձանք ինչ վոր լավ ե, դժվարահաս.
Բախտից ինչո՞ւ յեռ տրտնջում, ի՞նչ արավ նա վռ խելահաս:

Լսիր դու ինձ, գնանք ինձ հետ, հոժարակամ հեծիր քո ձին,
Մի հետևի՛ր դու քո գլխի խորհուրդներին ու մտքերին,
Արա՛, ինչ դու չեռ ցանկանում, մի հետևիր քո ցանկության,
Լավ չլինե՛ր, չլի ասի, յեռ չեմ սիրում կեղծավոր բան»:

Թարգմ. Ք. ԱՍԱՏՈՒՐ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ռուսթավելին և նրա «Վազրենավորը» Գ. Սևվակ	5
Շոթա Ռուսթավելի (կենսագրական) կազմ. Գ. Գ.	15
Շոթա Ռուսթավելու «Վազրենավորը» (պոեմի համառոտ բովանդակությունը) Մ. Դ.	16
Հաավածներ Շոթա Ռուսթավելու պոեմից (Սաբդսի, Վ. Տերյանի, Գ. Ասատուրի թարգմանությամբ).	32

Վաղճենցին և Խմբագրեցին՝ Ք Ս ե ա կ, Մ. Դ ու ը գ ա ը յ ա ն,
Տեխ. Խմբագիր՝ Ա. Ն. Ք ա ս ա ղ ա ը յ ա ն
Սրբագրիչ՝ Ա. Ա ը ղ ա ը ա ն յ ա ն
Գոհարայ սրբագրիչ՝ Ս. Շ ա հ ը ա ղ յ ա ն

Դրամի լիտի լիտի 4. 4721 Հրատ. 4416.

Պատվեր 1364 Տիրում 5000.

Թուղթ 74X110. տպ. 3 մամուլ.

Մեկ մամ. 49280 նիշ, Հեղինակային 31/2 մամ.

Հանձնված է արտադրության 29 դեկտ. 1937 թ.

Ստորագրված է ապելու 25 հունվարի, 1938 թ.

Գինը 80 Կ.

(304)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԳԻՏ. ԳՐԱԴ.



220032122

A $\frac{11}{32122}$